



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԱ. Տարի - ՆՈՅԵՄԲԵՐ 1935 11^{me} Année - Novembre 1935

Խմբագրական

Սրբուհեցէ՛ք

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Մեր Տէրոջը աղօթքի կեանքը եւ...

Նախանձը

Թարգ.

Շնորհաց ծովէն

Կ'ուզեմ՝ զկայել

Սիմզար Հազարեան

Կենաց ամուսներէն

Սուրբ մայր մ'ը

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Եւանկանց սիւնակ

Վկայութիւնս

Որոշումս

Հոստովարդ Բէտէեան

Սամուէլ Գ.

Ջանազան բւերք



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերերը Թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծաւալելու ամենոն, որոնք Յշմարտութիւնը
կը փնտւեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վայելեալն: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի Յշմարիտ Վանքին
ներկայացուցիչն ալ ջնանչնար ու եւ յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերերը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուսն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատր. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ Թէ հայերէնին ժողովանութիւնը այլ տարրեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիտութիւն կուտայ որ Թուրքերէն զիացող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերտալին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրեցու ամենօրեայ ուրախութիւնը կը վաղիկն Քրիստոսով:

XXXXXXXXXXXX

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԴԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ խկ ղրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական աւաքումներու համար մէջն Compte Chèque Postal ք Հ. Ն. Ghazarossian, 182, 53 Marseille

ԲԱՆԲԵՐ

Արմենի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռնին
ընէ, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի՛ ալ աս
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Ուրիմ'ն ա'լ վախճանք, որ չըլլայ եւ
Անոր հանգիստը մանկու խոտամանքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը գրկուած գտնուի: Եբր. Գ. 1

Եբր. Ժ. 37

ԺԱ. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 1955

ԹԻԻ 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՐԲՈՒՆԵՑԵՔ

Սրբեցէ՛ք ձեռքերնիդ... մաքրեցէ՛ք սրտերնիդ:
Յազ. Գ. 8

Ուստի սիրելիներ, սրովհետեւ մենք այս խոտ-
մուսքները ունինք, մեր անձերը մարմնի ու հոգիի
ամէն կերպ պղծութենէ մաքրենք, ու սրբութիւնը
կատարեւապարծենք Աստուծոյ վախովը:

Բ. Կոր. Է. 1

«Բանբեր»ի անցեալ թիւին մէջ յիշեցինք
կարգ մը զանցառական մեղքեր, զորոնք պիտի
գտնենք մեր մէջ երբ լուրջ անձնաքննութեան
մտնենք եւ մեր ու մեր Տէրոջ միջեւ արդար դա-
տաստան տեսնենք: Ասոնք արգելքներ են որոնք
զմեզ անկարող կ'ընեն սեւէ արթնութիւն մը ա-
կնկալելէ:

Հոս տեղն է որ «Բանբեր»ի ընթերցողներուն
չերմօրէն յանձնարարեմ «Արթնութիւնը որուն
կը կարօտինք» գրքոյկը, քանի մը տարի առաջ
թարգմանարար հրատարակուած «Մարանաթա»
հոգեւոր ամսաթերթի խմբագրութեան⁽¹⁾ կող-
մէն: Այս գրքոյկը պիտի յանձնարարէի իւրա-
քանչիւր հոգեւորի: Ես անձամբ քանի մը ան-
գամ կարդացած եմ, եւ ամէն անգամ որ կրկին
ձեռքս առած եմ, կրցած եմ նոր թարմութեամբ
կարդալ դայն:

Բայց մենք անցնինք անձնաքննութեան տար-
բեր դաշտերը այցելելու եւ մեր անձին հետ հաշ-
ուեյարդարի նստելու: Մենք առինք երեք տե-
սակ հոգեւոր զանցառութիւններ, ապերախտու-
թեան, ազօթքի կեանքի եւ շնորհաց միջոցներու
զանցառական մեղքերը:

Չորրորդն է՝ Տէրոջը ձայնը լսելու մէջ զան-

ցառութիւն: Բրիտանեայ մը վերստին ծնանելէ
յետոյ որոշ ուղղութիւն մը ունի: Անիկա կը քա-
լէ ո'չ թէ բաղդին չորս հոգեւորն հետեւելով,
հապա յատակ եւ գիտակից ուղղութեամբ մը:
Անիկա գիտակից նաւ մըն է, որ բարձրագոյն
հրամանատարի մը (Ս. Հոգիին) ղեկավարութեան
տակ կը յառաջանայ ջուրերուն վրայէն դէպի
նպատակակէտը՝ կուրծք տալով յորձանքներուն
ու ահարկու ալիքներուն: Անիկա չքալեր այնպէս
որպէս թէ իւրաքանչիւր քայլ իրեն առջեւ լոյսի
պէս յայտնի ըլլար, հապա կը քալէ հաւատքով,
իր սրտին ահանջները միշտ բաց են լսելու վե-
րին հրամանը յառաջիկայ առնելիք քայլին
համար: Այսպէս նա կը քալէ, քայլ առ քայլ
կ'ընթանայ անսալով վերին ձայնին հրամաննե-
րուն:

Աստուծոյ զաւակ մը իր ծնած օրէն վարժը-
ւելու է Աստուծոյ ձայնին, քանզի կան մեր մէջ
շատ մը ձայներ զորոնք կը լսենք: Այդ ձայները
յաճախ կեղծ նմանողութեամբ կ'արտայայտուին,
հոգեւոր եւ աստուածահաճոյ փողի դիմակներուն
մէջէն կը լսուին, մեր ուղղութիւնը աւելի կը
զրաւեն, զմեզ աւելի կը զերեն լուսաւոր հորիզոն-
ներով, մանաւանդ այն ատեն երբ մեր որոշումը
տալու ստիպողականութեան տակ կը գտնուինք:

Ա'հ, խոստովանինք թէ յաճախ մեր զգացում-
ներուն հետեւեցանք, մեր ներսէն եկած ձայնե-
րուն, մեր անձնական շահերուն աւելի յարմա-
րող, մեր ցանկութիւնները զրգոող ձայները ա-
ւելի շուտ լսեցինք, քան Աստուծոյ ձայնը որ
զմեզ կ'ամչցնէր, մեզի կ'ազդարարէր, զմեզ կը
ղգուշացնէր, կը յանդիմանէր, կը պատժէր: Տէ-
րոջը ձայնին վարժուելու են մեր ահանջները: Ա-
նիկա յաճախ մեր ներքին փափաքներուն հա-

(1) Հասցէն է, Maranatha, B. P. 303, Alep, Syrie

կառավար կը խօսի: Անոր ցուցուցած ճամբաները դժուար եւ անելի կ'երեւին: Այդ պատճառաւ հաւատացեալներս յաճախ խոյս կուտանք այդ ճամբանէն: Եւ ինչպէս խօսեցիք թէ Աստուծոյ ցոյց տուածը չէ, ու կը փնտռենք դիւրինը որ կեանքի հառաջնորդէր: Տէրը կը խօսի մասնաւորապէս Իր խօսքին միջոցաւ: Զանկա յաճախ եւ խորապէս քննենք: Անկա մեր ամենօրեայ հացը թող ըլլայ, անոր մէջ ապահով ենք: Կը խօսի նաեւ եղբօր մը միջոցաւ. ուստի եղբօր մը ըսած խօսքը չանդունենք ու չանարգենք, հապա մեր երկայ մտածութեանց ու անձնաքննութեանց նիւթ ընենք, քանզի կրնայ ըլլալ որ Տէրը այսօր յարմար սեպեց մեզի այդ եղբօր միջոցով խօսելու: Եղբայրներ, Տէրոջը ձայնը ուրիշ ձայներէ զանազանքն եւ Տէրոջը ձայնը մտիկ ընելու մէջ յառաջդիմենք աւելի կեանքին համար:

Հիմա երբ զանցառական մեղքն է անհաւատութիւնը, աւելի եւս ըսեմ թերահաւատութիւնը: Քանզի դեռ չբացատրուած սիրելի ընթերցողս պիտի ըսէ որ ինքը բնաւ անհաւատ մը եղած չէ, այսու ամենայնիւ Տէրը այս երկու բառերը զրեթէ նոյն գորութիւնով կը գործածէ: Այս կէտը թանձրացեալ կերպով հասկնալի ընելու համար Աբրահամի օրինակը կ'ուզեմ առնել: Անկա լսեց Տէրոջը ձայնը (Ծննդ. ԺԲ. 1), եւ ելաւ գնաց ու չէր գիտեր ուր կ'երթայ (Եբր. ԺԱ. 8) բայց կ'երթար հաւատքով: Իւրաքանչիւր հանգիստի ժամուն, ուր որ նա օթեւան կ'ընէր, հոն Աստուծոյ նոր հրամաններ կ'առնէր անցնելու մինչեւ յառաջիկա կայանը, ուր նա կրկին իր վրանը կը բանար... Բայց Աբրահամի զացած տեղերը իրեն անձանօթ էին (չէր գիտեր ուր կ'երթայ): Այն տեղ կային ուրիշ ազգեր ալ, ուրիշ ցեղեր եւ ցեղապետներ, որոնք իրեն վտանգ կ'սպառնային: Ատոնք կրնային բոլորը միանալ եւ այս նորելու ցեղապետին դէմ կայնիլ ու անոր բոլոր զօրքերը սպաննել, անոր ինչքը կողոպտել եւ իր երազները չորս հովերուն ցրուել: Աբրահամի մտքն թերեւս անցան, անպարման անցան այսպիսի խորհուրդներ, քանզի փորձողը նոյն խորամանկ օձն էր այն ստին ինչպէս այսօր, բայց Աբրահամ չթերահաւատեցաւ: Նա տեսաւ այդ թշնամիները, սպառնացող վտանգները, բայց հաւատքով պանդխտացաւ: Այս ըսել է թէ երբ նա Տէրոյմէ հրաման առաւ այսինչ տեղը երթալու, որքան ալ վտանգաւոր ըլլար այն, գիտէր թէ իր Տէրը զրկած էր զինք եւ ուստի անդորրութեամբ ու առանց սրտատրոփի կ'երթար հոն, կը

քնանար Տէրոջը բազուկներուն մէջ ու կ'արթնար Անոր փառք տալով:

Սակայն գիտենք որ Աբրահամի կեանքին մէջ ալ զստեղծեցան թերահաւատական քայլեր, որոնցմէ ինք եւ իր սերունդը ցաւ քաշեցին: Այս քայլը առաւ այն ատեն միայն, երբ Աստուծոյ ձայնը ուրիշ ձայնի մը հետ շփոթեց:

Ասիկա ի՞նչ գործ ունի հողեւորի մը հետ կ'ընէր բայց այդ անհաւատութիւնը ուրիշ Աստուծոյ զաւակներուն ալ մեղքը եղած է: Քննէ ինքզինքդ, գործաւոր մըն ես, գործէն դուրս հանուցար, այսօր ալ կը կարդաս Ս, Գիրքդ՝ լեցած նոյն խոստումներով, ինչպէս որ կարդացեր էիր առաջ, բայց հիմա տարբեր ակնոցով մը կը կարդաս: Այն խոստումները որոնք քեզի ներշնչման խօսքեր էին որոնցմով ուրիշները կը խրատէիր, հիմա զքեզ թերեւս դժուարաւ կրնան միւրթարել: Անոնք քեզի երբեմն ծնողայի մը ձայնին պէս կուզան, քու սիրտդ պատրաստ չէ այդ խոստումները կատարելապէս քեզի համար ընդունելու: Դուն անհաւատութեան փոսին մօտն ես, պէտք է Աստուծոյ ձայնը լսես եւ մանկական հաւատքով վստահիս Անոր որ նոյնն է երէկ, այսօր ու յաւիտեան: Որուն համար չկայ ո՛չ ժամանակ, ո՛չ միջոց եւ ո՛չ ալ անձի տարբերութիւն: Եթէ եւ ինչպիսի պիտի չկործանի, վասնզի Տէրը Անոր ձեռքը կը բռնէ: Տղայ էի ու ծերացայ, բայց արդարը անտես եղած չտեսայ, կամ անոր զաւակը հաց մուրացող (Սաղ. ԼԷ. 24, 25): Կը հաւատա՞ս ասոր, մինչեւ ո՞ր աստիճան, մինչեւ այն աստիճան երբ իրապէս հա՞ց ալ չգտնուի սեղանին վրայ: Տէրը գիտէ Իր զաւակները, եւ անոնք անտես չպիտի ըլլան. մի՛ թերահաւատիր: Այս վիճակը յարմար դաշտ մըն է Սատանային որ թերահաւատութեան սերմեր ցանէ սրտիդ մէջ, բայց նաեւ դաշտ մըն է ուր Տէրը հաւատքի հերոսը պիտի մարզէ: Սրբէ ինքզինքդ անհաւատութենէ:

Սրբենք ինքզինքնիս անհաւատութենէ նաեւ մեր եկեղեցւոյ վիճակին կամ կաղ անհատներու հանդէպ, եւ հաւատքով զօրացած անոնց համար ազօթենք, սիրով լեցուինք անոնց հանդէպ, հաւատանք Տէրոջը որ կրնայ քարերէն Աբրահամի որդիներ հանելու:

Վեցերորդ զանցառութեան մեղք մը կարելի է նկատել անհաւատութեան իւր:

Ասիկա չէ ամբարիշտին անհնազանդութիւնը, այլ Աստուծոյ զաւակինը, որ ամէն ատեն ու ամէն տեղ ու շատ անգամներ ալ ամէն մարդէ չը աեսնուիր, բայց արդելք մըն է որ պատճառ

կ'ըլլայ Աստուծոյ օրհնութեանց խափանութիւնն: Կան անհնազանդութիւններ պատահական, ստիպողական եւ պարագայական: Աստուծոյ գաւազ մը այս երեքին մէջ ալ դիւրաւ իյնալու վտանգին մէջ կը գտնուի: Շատ անգամ աւելի դիւրին կ'ըլլայ գոհեր եւ ողջակէզներ մատուցանել քան թէ հնազանդիլ: Մեզի աւելի դիւրին կուզայ եկեղեցիին մեծ նուէր մը ընել կամ աղքատաց լաւ գումար մը բաժնել քան եղբօր մը առջեւ խոնարհիլ եւ մեր ըրած մէկ անիրաւութիւնը խոստովանիլ: Այլեայլ անտեղի առարկութիւններ մէջըրելով կամ այս կամ այն փաստերով զմեզ կ'արգարացնենք մեր խղճին ու մարդոց առջեւ: Մատթ. Ե. 24ի եւ ԺԸ. 13ի առջեւէն քիչ հոգեւորներ առանց երկար սպասումի անցած են: Խոստովանինք թէ ի՞նչ արցունքներ, ի՞նչ քրքրատինք, ի՞նչ անքնութիւն եւ ներքին տառապանքներ արժեցուցած է եւր, մինչեւ որ կըցած ենք հնազանդիլ Աստուծոյ այդ պարզ հրամանին: Ու զեռ քանինե՛ր կան որոնք այդ երկու հրամաններուն առջեւ կը կենան անհնազանդ, պարապ ու անհիմն եւ չարակամ խորհուրդներով, զրպարտութիւնով ու նախանձի հոգիով անուցանելով իրենց եւր եւ ինքզինքնին արգարացնելով: Արդեօք «Բանբերի ընթերցողներուն մէջ չկա՛ն այդպիսիներ, սիրելի ընթերցող, դուն ազա՛տ ես այս մեղքէն, կը հնազանդի՞ս ճշմարտութեան, ուր որ տեսնես եւ որմէ որ լսես զայն:

Ուրիշ պարագայի մը երբ մեր անձնական զաղափարը նաեւ ուրիշներուն զաղափարը, հասարակաց կարծիքը դէմ դիմաց կեցած է Աստուծոյ խօսքին հետ, ի՞նչպէս ջանացած ենք Տէրոջը պատգամին ճշմարտութիւնը տեսնելով հանդերձ զԱստուծոյ մեր տկար, փաղաքշական խօսքերովը միայն գոհացնել, ու վերջապէս ըրած ենք մեր անձնական կամքը: Անհնազանդ եղած ենք, միմիայն Աստուծոյ երկայնմտութիւնը շահագործելով, աւելի ճիշդ է ըսել՝ չարագործելով: Պօղոս արիւնին ու մարմինին չհարցուց, ասոր համար Պօղոս եղաւ:

Մտքերնիս բերենք պարագաներ, որոնց մէջ քիչ աղօթած ըլլալով, հապճեպով մեր սուրբ անհնազանդութեան նժարին մէջ նետած ենք:

Տէրը Իրեն հնազանդ եղողները միայն Իր Ա. Հոգիովը կը լեցնէ:


Ասոնք եւ ասոնց նման շատ մը զանցառութիւններ պատճառ են որ Տէրոջը Հոգին կաշկանդուած ըլլայ մեր մէջ առատութեամբ գործելու: Սրբենք ինքզինքնիս զանցառութիւններէ:

Յ. Ն. Ղ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՄԵՐ ՏԷՐՈՋԸ ԱՂՕԹՔԻ ԿԵԱՆՔԸ ԵՒ

ԽԱՉԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ



Յիսուս՝ Աստուծոյ հոգիէն եւ զօրութենէն կախում ունէր աղօթքի մէջ Աստուծոյ հետ հաղորդակցութեամբ: Յիսուսի աղօթքի կեանքը՝ նախապէս երբեք տեսնուած ոեւէ բանէ տարբեր էր: Այդ՝ Իր բոլոր ըրած եւ խօսածին հեռանդկարն էր: Անիկա Աւետարանի արձանագրութեանց վրայ լոյսի մը պէս կը տարածուի: Յիսուսի կեանքին մէջ Աստուծոյ մեծ գիտակցութիւնը կայ: Աստուծոյ ներկայութիւնը այնչափ իրական էր Իրեն, որչափ այն ժողովուրդին ներկայութիւնը որոնց մէջ Ինք կը գործէր: Նա յաճախ կը հեռանար բազմութենէն եւ նոյնիսկ Իր աշակերտներէն ու կ'երթար անուպատը կամ լեռան կողմ՝ առանձին Աստուծոյ հետ հաղորդակցութեամբ ժամանակ անցնելու: Բայց Անիկա հրապարակային դէպքի մը ընթացքին կը մեկուսանար բոլոր մը Իր շօրը (հետ) խօսելու, մինչ բազմութիւններ իր շուրջ կը խոնուէին: Անոր մերձեցումը առ Աստուած անմիջական էր, եւ Իր ընկերակցութիւնը Աստուծոյ հետ՝ մտերմական:

Սակայն այս մտերիմ մերձեցումն առ Աստուած միշտ զրօշմուած էր կախում ունեցող դիրքով մը: Յիսուս Աստուծոյ կը սպասէր աղօթքի մէջ եւ Իր պաշտօնը յառաջ տանելու զօրութիւնը իրեն եկաւ Իր աղօթքի կեանքին մէջէն՝ մինչ Ինք յառաջ կ'ընթանար: Նոյնիսկ Իր հրաշքները աղօթքի պատասխաններ էին: Այս ճշմարտութիւնը ալ աւելի ակներեւ կ'ըլլայ անուղղակի եւ անակնկալ կերպէն, որու Ինք կ'ակնարկէր: Երբ աշակերտները Իր ուշադրութիւնը հրաւիրեցին թզենիին, որ Իր անէծքին վրայ չորցեր էր, Յիսուս հրաշքին բնութեան ոեւէ ակնարկութիւն չըրաւ, այլ զայն գործածեց իբր օրինակ հաւատքի եւ պատասխանուած աղօթքի (Մարկ. ԺԱ. 22-24): Երբ նա Ղազարոսի գերեզմանի առջեւ կեցաւ եւ չորս օրուայ մեռած մարդ մը ետ կեանքի կանչելու վրայ էր, նախ Իր երեսը շրնորհակալութեամբ վերցուց առ Աստուած՝ որովհետեւ Ինք արդէն լուծած էր (Յովհ. ԺԱ. 41): Այս հրաշքը կատարելու ոյժը, բոլոր Իր գործե-

րուն ամենամեծը, տրուած էր ի պատասխան չարձանագրուած աղօթքի մը:

Ուրեմն այս էր Յիսուսի երկրի վրայ ապրած կեանքին տեսակը: Անիկա Ամենաբարձրեալին Որդին ու փառաց Տէրն էր. բայց իր այս կեանքը ապրուած էր մարդկային փորձառութեան խտապահանջ եւ նեղ սահմաններուն մէջ: Մինչ ան մարդկային կեանք մըն էր, ան տարբեր էր երկրի վրայ երեւք տեսնուած ուրիշ մարդկային կեանքէ: Ան երկրի վրայ երկինքէն կառավարուած կեանք մըն էր:

Երբ փարիսեցիին պատեհութեամբ մը Յիսուսի հարցուց թէ Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գար, Ան պատասխանեց որ ան՝ «դրսուանց երեւցած բաներով» չպիտի գար: Իրենց ակնկալածին նման ոեւէ տեսանելի նշան չկար: Ոչ մէկ անակնկալ ու շլացուցիչ ցոյց չպիտի ըլլար: «Վասնզի ասհա» շարունակեց Անիկա, «Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է» (Ղուկ. ԺԷ. 21):

Խաչին խորհուրդը.—

Բայց թագաւորութիւնը ի՞նչպէս պիտի գար աշխարհ: Յիսուսի կեանքին մէջ պատահածը ինչպէ՞ս ուրիշ մարդոց կեանքին մէջ պիտի իրականանար: Անիկա մեզ կը բերէ խաչին խորհուրդին: «Եթէ ցորենի հատը հողին մէջ խնամուլով չմեռնի, ինք մինակ կը մնայ, ապա եթէ մեռնի՝ շատ արդիւնք կը բերէ» (Յովհ. ԺԲ. 24): Այս խօսքերը Յիսուսի կողմէ խօսուեցան իր հրապարակային գործունէութեան ճիշդ վերջաւորութեան: Մի քանի յոյներ որ Զատիկի ժամանակ երուսաղէմ եկած էին Իսրայէլէ դուրսի աշխարհէն, Յիսուսի հետ տեսակցութիւն մը խնդրած էին: Իրենց խնդիրքը Յիսուսը բերաւ դէմ առ դէմ գերագոյն ճգնաժամին՝ որուն կը յառաջանար իր բոլոր սպասաւորութիւնը, ինչու որ թագաւորութեան պատգամը աշխարհի տրուելէն առաջ Քրիստոսի մահը տեղի ունենալու էր: Նա յայտարարեց, «ժամանակը հասաւ որ փառաւորութի Որդին մարդոյ»: Հեռանկարը իր հողին յուզումներով լեցուց: «Հիմա իմ հողիս խռոված է, եւ ի՛նչ ըսեմ, Հայր, զիս ազատէ այս ժամէն»: Այդ էր իր ըսելիքը, զայն իր աղօթքը պիտի ընէ: Ո՛չ: — «Բայց Ես ասոր համար եկայ, այս ժամին: Հայր, փառաւորէ Քու անունդ»: Ու վերանորոգուած վճռականութեամբ Յիսուս զիմագրաւեց իր անձնուրացութեան վերջին քայլը, որպէսզի Հօրը կամքը կատարէր:

Այն ատեն՝ իր կեանքին մէջ երրորդ անգամ ըլլալով երկինքէն ձայն մը եկաւ Հօրը իր վրայ ունեցած հաւանութիւնը յայտնող: Նշանակալից է

որ այս երեք պարագաներէն իւրաքանչիւրը ճգնաժամ մը ընտրուեց, որոնց մէջ Յիսուս հանդարտօրէն ընտրեց խաչը: Առաջին պարագան Յորդանանու մօտ էր, երբ Նա Ինքզինք նուիրեց Մեսիական պաշտօնին, եւ Ինքզինք նոյնացուց իր ժողովուրդին հետ գործիքի ձեւնարկեր էր: Երկրորդը՝ Այլակերպութեան լերան վրայ էր, երբ Անիկա իր առջեւ յայտնապէս բացուած փառքի դռնէն ետ դարձաւ, եւ փոխանակ երկինք այդ ճամբով մտնելու, կրկին աշխարհ իջաւ իր մեկնումը ուրիշ ճամբով մը կատարելու (Ղուկ. Թ. 34): Երրորդ պարագան ճիշդ խաչին շուքին տակն էր: Ի պատասխան Որդւոյն աղօթքին՝ Հօր ձայնը եկաւ, «Փառաւորեցի ալ, ու նորէն պիտի փառաւորեմ»: Ասոնք, անտարակոյս կ'ակնարկեն մէկ կողմէն Յիսուսի կեանքին մէջ ինչ որ արդէն կատարուած էր, եւ միւս կողմէն ինչ որ իր մահովը պիտի կատարուէր:

Թէպէտեւ Տէրը յայտնապէս աչքի առջեւ ունէր իր մահը իր պաշտօնին սկիզբէն, Ան Հայտնեց այս իրողութիւնը իր աշակերտներուն մինչեւ այն օրը երբ վախճանը կը մօտենար: Եւ երբ Անիկա յայտնեց, Նա ակնարկութիւն մը ըրաւ թէ իրենք ալ պիտի քուէին այս դէպքերուն մէջ:

Ան ըսաւ անոնց, «Եթէ մէկը կ'ուզէ իմ ետեւէս գալ, թող իր անձը ուրանայ եւ իր խաչը վերցնէ ու իմ ետեւէս գայ»: Այս հրաւերը մըն էր անոնց՝ իրենք զիրենք Անոր հետ նոյնացնելու իր առած ընթացքին մէջ: Քիչ յետոյ Նա խօսեցաւ իր կեանքը շատերու համար փրկանք տալու վրայ: Յետոյ վերնատունը աշակերտներուն հետ հրաժեշտի ժողովի ընթացքին՝ Անիկա իր մօտալուտ մահուան յայտարարութիւնները վերին աստիճանի հասցուց երբ Անիկա յիշատակելի ընթրիքը հաստատեց: «Այս է իմ մարմինս որ ձեզի համար տրուած է» . . . «Այս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս որ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար»: Բայց նոյնիսկ աշակերտները տակաւին չկրցան հասկընալ Անոր խօսքերուն իրական նշանակութիւնը: Տէրը Ինք զայս զիսցաւ՝ երբ Ան ըսաւ, «Զեզի տակաւին շատ բաներ ունիմ ըսելու, բայց հիմա չէք կրնար տանիլ»:

Յիսուսի յարութիւնը բոլորովին չլուսաւորեց զանոնք, ինչու որ համբարձման նախընթոյն անոնք հարցուցին Անոր թէ Իսրայէլի թագաւորութիւնը այս ժամանակի՞ն մէջ պիտի հաստատէր: Տէրով պատասխանը անոնց այս ակնարկութիւնը չթխտեց, ճշմարտութեան տարր մը կար իրենց այս մարգարէական յոյսին մէջ: Բայց

իրենց հարցումը սա իրականութիւնը երեւան բերաւ թէ անոնք տակաւին իրազէկ չէին գալիք թագաւորութեան էական բնութեանը: Աստուծոյ թագաւորութիւնը ոեւէ նիւթական ձեւով մը կարենալ յայտնուելէ առաջ, ատոր հիմը պէտք էր հաստատուիլ նոր հոգեւոր տնօրինութեան մը վրայ:

Անկից ետք եկաւ Պենտեկոստէն, ու ատոնց բոլորին իմաստը նոր օրուայ մը լոյսին պէս՝ ծագեցաւ աշակերտներուն վրայ: Անոնք իրենք զիրենք գտան կեանքի նոր տնօրէնութեան մը ներքեւ: Նոր ուժեր կը գործէին իրենց կեանքերուն մէջ: Իրենց Տէրը որ երկինք մտեր էր Իր լման եւ կատարեալ մարդկութեամբը, Իր հոգին անոնց վրայ թափեր էր: Կեանքը որ բնականաւ Անոր մէջ, հիմա հաղորդուած էր անոնց: Ինչ որ Անոր կեանքին մէջ կատարուած էր երկրի վրայ, հիմա սկսաւ կատարուիլ անոնցինն մէջ: Անոր ստեղծած նոր բնութիւնը իր ակն առած էր անոնց բնութեանը մէջ ու զինքը կը վերարտադրէր անոնց մէջ, այսպէսով անոնք ալ սկսան Աստուծոյ կամքը կատարել՝ ոչ թէ երկրային չափանիշի մը հետեւելով, այլ ներքին զօրութեան մը որ երկինքէն եկաւ:

Աշակերտները այլեւս չխօսեցան Իսրայէլի թագաւորութեան վերահաստատութեան վրայօք, բայց ցրուեցան թագաւորութեան Աւետարանը աշխարհին տանելու: Անոնց պատգամը հիմա երկնից թագաւորութեան մօտ ըլլալը չէր, անոնք վկայեցին այն դերբնական եղելութեան մասին, որոնց վրայ հաստատուած էր թագաւորութիւնը:

Այս իրողութեանց կեդրոնը կը կենար խաչը: Իր անձին պատարագին եւ ուրացման այդ բարձրագոյն արարքին միջոցով Յիսուս բան մը ըրած էր որով մարդկային ցեղը փրկած ու մարդկային բնութեան ընթացքը վերիվար շրջած էր: Իբրեւ ներկայացուցիչ—մարդ մահուան իջեր էր, որ մահ մը կարենար կատարուիլ նաեւ անոնց մէջ որոնց համար Անիկա մեռաւ, հին բնութեան մահը: Անիկա մահէն յարեաւ իբր նոր մարդ, նոր ցեղին Գլուխը, որպէսզի Անոն ստեղծած նոր բնութիւնը կարենար անոնց հաղորդուիլ: Քրիստոս այսպէսով հնարաւոր ըրաւ որ Իր անձնական կեանքին մէջ գործող Աստուծոյ կամքը կարենար գործել նաեւ ուրիշ մարդոց կեանքին մէջ: Իր ժողովուրդը հիմա յօժարակամ պիտի ըլլար Անոր զօրութեան օրուանը մէջ: Գողգոթայի վրայ այդ գործողութեան խորիմաց խորութեանը մէջ՝ Անիկա դրած է երկրի վրայ Աստուծոյ թագաւորութեան հիմերը՝ անշարժ եւ յաւիտեան:

Քրիստոնէութեան սրտին մէջ ներկայիս իրականութիւնն է երկինքի թագաւորութիւնը, որ անտեսանելի տնօրինութիւնն է այն իրաց որ տեսանելի եկեղեցիին գոյութեան հիմերը կուտան: Անիկա արդէն հիմնուած է եւ ուրիշ հիման պէտք չունի: Եկեղեցիին գործն է անոր վրայ գործի սկսիլ եւ յառաջանալ ու զայն բոլոր աշխարհին մէջ ծանուցանել: Անիկա զալիք նոր աշխարհին հիմնական հոգեւոր տնօրէնութիւնն է:

ՆԱԽԱՆՁ

○○○○○

Չկայ բան մը որ հոգեւոր կեանքը վտանգէ ու ամլացնէ որքան նախանձը: Ան որ իր մէջ կը գգուէ այս թունաւոր օձը, կը տեսնէ իր հոգեւոր կեանքին խաւարը ու իր առ Աստուած ունեցած սիրոյն պաղիւր: Դրեթէ բոլոր անհամաձայնութիւնները, զառնութիւնները եւ պառակտումները որ կը ծագին Տէրով ծառաներուն միջեւ, իրենց դրդապատճառ ունին նախանձը:

Նախանձը մահուան պէս անկորնչելի է (Երգ. Ը, 6):

Ոչ արցունք ու ոչ գուր զիտէ ան: Ան կրնայ գտնուիլ իր բոլոր ուժգնութեամբը անոնց մէջ որոնք կը յաւակնին բարձր հոգեւորութիւն մ'ունելալ: Աստուծոյ գործին նախանձաւորութեան վերարկուին տակ կը ծպտուի ան: Դիւրին չէ մատը անոր վրայ դնել բացորոշ մեղքերու նշման, որպէս է գինեմոլութիւնը կամ անբարոյականութիւնը, սակայն վերջապէս կը յայտնուի: Կը նշմարուի խօսքերու ու գործերու մէջ, կը յայտնէ ինքզինք անոր մէջ որ Տէրով ծառայելու պաշտօնն կ'ընէ:

Ահա թէ ինչ նշաններով կարելի է ճանչնալ զայն:

Նախանձը չկրնար հանդուրժել որ ուրիշ մը իրմէ աւելի գնահատուի: Ան սառ ու ծուռ աչքով կը դիտէ իր ընկերին յառաջանալը: Անոր անկարելի է ուրախանալ եւ զԱստուած փառաւորել ուրիշներու ձեռքով տեղի ունեցած յաջողութեանց եւ ապաշխարութեանց վրայ: Մինչ ինք միայն հազար ունի, չկրնար տանիլ որ «Դաւիթի բիւրաւորները» խօսուի: Ան Սաւուղի նման պատրաստ է իր նիզակը վերցնել ու պատին գամել զայն որ Աստուծոյ հովանաւորութիւնը ունի իր

վրայ: Ան կը վարկաբեկէ անոր գործը ու ներք-
նապէս տեսնել կը մաղթէ խորտակումը իր հիմ-
նադիրին հետ:

Նախանձը քրիստոնէական եղբայրութեան կա-
պերը կը փշրէ եւ կողմերու կը բաժնէ Աստուծոյ
ծառաները, որոնք Իսմայէլացիներու նման են
միշտ իրարու դէմ կոուելու մէջ, փաստելու եւ
բնաջնջուելու ենթակայ:

Սակայն Իսրայէլի Սուրբը ծաղր չըլլաւ: Իր
աչքերը կը դիտեն, Անոր նայուածքը կը գննէ
մարդոց գործերուն շարժառիթները: Ան գիտէ թէ
որու սրտին մէջ է որ կը ծպտուի այս օձը նա-
խանձի, եւ ուշ կամ կանուխ պիտի արձակէ իր
վճիռը:

Եղբայրներ, զգուշանա՛նք, որ չըլլայ թէ այս
կործանարար զգացումը տեղ գտնէ մեր մէջ: Ար-
դարեւ անոր բունը մեր բնական ու չար սրտին
մէջ կը գտնուի, ինչպէս ամէն ուրիշ ձեւ մեղքի:
Աստուած մեզմէ կը պահանջէ մեռցնել մեղաց
մարմինը եւ խզել ինքզինքնիս ամէն գէշ երե-
ւոյթներէ:

Մեր գործն է արգիլել որ նախանձը ասպա-
րէզ գտնէ մեր սիրտերուն մէջ, ու եթէ կ'զգանք
իր խալթումները, չձգել որ ծաւալի, նամանա-
ւանդ չսնուցանել: Երբ իր գլուխը ցցէ, Աստու-
ծոյ քով փնտռենք փրկութեան օգնութիւնը: Իս-
կոյն Անոր երթանք:

Օձերը չեն ախորժիր լոյսէ ու նախանձը իր
գլուխը չի ցցեր Աստուծոյ ներկայութեան
մէջ:

ԹԱՐԳՄ.

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

ԿՈՒՉԵՄ ՎԿԱՅԵԼ



Պիտի չմեռնիմ, հապա պիտի ապրիմ ու Տէրը
գործերը պատմեմ: Սաղ. ԶԺԸ. 17

Մեր հոգեւոր երգարանին 139րդ երգին հեղի-
նակը իմ թէ՛ մարմնաւոր եւ թէ՛ հոգեւոր կեան-
քիս ճշգրիտ ու խտացեալ ամփոփումը կ'ընէ այս
քանի մը տողերով:--

Ի՛նչ գէշ էր իմ վիճակս,
Երբ Տէրը զիս տեսաւ,
Եւ հոգիիս դարմանը
Հոկ Ինք ինծի տուաւ:
Մահուան շատ մօտ գտաւ զիս,
Գերեզմանէն հանեց,
Որ խեղճ մարդոց պատճեմ ես,
Ինտոր զիս բժշկեց:

Ծնած եմ 13 Դեկտ. 1908ին լուսաւորչական
ծնողքէ, Կարնոյ Ծաղկարի գիւղին մէջ:

Տխուր է ըսել թէ հայրս եւ մայրս սաստիկ
աւելորդապաշտ եւ մոլեռանդ աւանդապահներ
ըլլալով զիս ալ մանկութենէս իրենց այդ աղե-
տաբեր հաւատալիքներով դաստիարակած են:
Լաւ կը յիշեմ, տարագրութեան շրջանին մօրս
վերջին խրատն էր որ սուրբերուն աղօթք եւ
ուխտ ընելէն չդադարիմ: Միայն ապաշխարու-
թենէս վերջ աչքերս լուսաւորուեցան եւ ես գիտ-
ցայ որ սուրբերու եւ սրբունիներու միջոցով Աս-
տուծոյ մօտեցաւ ոչ միայն պարապ եւ անօգուտ
պաշտամունք մըն է, այլ նաեւ սրբապղծութիւն
է: Վասնզի գրուած է, մէկ Աստուած կայ ու Մէկ
Միջնորդ Աստուծոյ ու մարդոց մէջաեղ, Քրիս-
տոս Յիսուս մարդը՝ Ա. Տիմ. Բ. 5: Տէր Յիսուս
Ինք ալ կ'ըսէ, «Եթէ իմ անունովս» ոչ թէ սուր-
բի մը կամ սրբունիի մը անունովը, հապա իմ
անունովս բան մը խնդրէք, զանիկա պիտի կա-
տարեմ» Յովհ. ԺԴ. 14: Եւ դարձեալ գրուած է
մարգարէին ձեռքով «Անի՛մալ է այն մարդը որ
մարդու կ'ապաւինի» Երեմ. ԺԷ. 5:

Աստուծոյ նախախնամութեամբը տարագրու-
թեան զարհուրելի դէպքերէն ճողպարած, մօրս
հետ 1918ին Պօլիս հասանք: Առաջնորդարանի մի-
ջոցով Ազգային վարժարան մտայ: Հոն շատ մը
օգտակար դասերու հետ մէկտեղ մեզի կը աւը-
ւէր նաեւ Հայ Ազգ. Պատմութիւն եւ կրօնի դաս,
մին վրէժխնդրական ուսուցումով եւ միւսը ա-
ւանդութիւններով շաղախուած: Այս դաստիարա-
կութիւնն ալ իր կարգին ֆառակալ եղաւ թէ՛
ինծի եւ թէ՛ դասընկերներու: Քանի որ ամենա-
դառն վրէժխնդրական զգացումներով լեցուած
մեր սրտերը յագեցնելու ունէ միջոց ու կարելի-
ութիւն չկար, պարտադրուած էինք ներքնապէս
միշտ տանջուի՛լ, եւ մնալ ատելափառ, շղաղը-
զիս ու տրտո՛ւմ: Ո՛հ, որքա՛ն աւելի մխիթար-
ուած եւ երջանիկ պիտի զգայինք ինքզինքնիս,
եթէ մեր վիրաւոր սրտերուն վրայ վրէժխնդրու-
թեան թոյնին տեղ՝ Աստուծոյ բժշկարար եւ սփո-
փիչ այս խօսքը որպէս բալասան դրուէր, «Մի-
րելիներ, վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձե-

րուն համար... վասնզի գրուած է, վրէժխնդրութիւնը Իմն է, Ես պիտի հատուցանեմ կ'ըսէ Տէրը... Չարէն մի յաղթուիր, հապա բարիով յաղթէ չարին» Հոով ԺԲ. 19-21:

Ժամանակ մը վերջ մեր թաղին մէջ կիրակնօրեայ դպրոց մը բացուեցաւ Ամերիկ. միսիոնարներու ձեռքով: Տէրոջը ողորմութեամբը հոն առաջնորդուեցայ: Կեանքիս մէջ առաջին անգամն էր որ այդքան պարզ եւ հասկնալի կերպով Աստուծոյ խօսքը կը լսէի: Տուն վերադարձիս երբ ուրախութեամբ լսածներս մօրս կը պատմէի, ան բարկութեամբ մը լռեցուց զիս ըսելով, «Ես քեզ քիւրտերուն ու թուրքերուն ձեռքէն ազատեցի որ հիմա ելլես բողոքական՝ ըլլա», ալ հոն մի երթար»: Բայց որովհետեւ անոնց տուած նպատակը կ'ապրէինք, մայրս յորդորեց զիս դարձեալ յաճախել անոնց դպրոցը, բայց երբեք չհաւատալ եւ մտիկ չընել անոնց ըսածներուն:

Անկաակած մայրս խաբուած ըլլալով ուրիշներէ, բոլոր բողոքականները եւ միսիոնարները Աստուածաշունչի նախատեսած «վերջին օրերու սուտ մարգարէները» ըլլալ կը կարծէր: Նոյն սըխալ համոզումով իմ միտքս ալ պատրաստած էր: Արդիւնքը այն եղաւ որ քիչ ատենէն դպրոցէն վճռուեցայ իմ անառակ եւ անուղղայ վարքիս պատճառաւ:

1923ին դեռ հազիւ 15 տարեկան աղջիկ էի, երբ մօրս թելադրութեամբը Սեբաստացի երիտասարդի մը հետ ամուսնացայ եւ անմիջապէս Դերանաս մեկնեցանք: Մ'արսիլիս չըջակայքը Քէմփ Օտօ անունով գաղթավայրին մէջ հաստատուեցանք: Այդ օրերուն մէջ զարմանալի ջգայնութեամբ եւ ատելութեան հոգիով լեցուած էի հոգեւոր կոշտողներու դէմ: Կիւլչան եղբ. Պատաքեան յաճախ մեր թաղին մէջ ժողովներ կ'ընէր: Օր մը երբ Սը. Գիրքերով լեցուած տոպրակը կոնակին մեզի այցելութեան եկաւ այս եղբայրը, յոգնած եւ քրտնած, յարմար առիթը գտալ չար սրտիս վրէժխնդրութիւնը յագեցնելու: Զուրի պէտք ունէր եղբայրը, գաւաթ մը մաքուր պաղ ջուրի տեղ, լուացուած ամաններուս մնացած ջուրէն լեցուն գաւաթ մը հրամցուցի, զոր բոլորովին անտեղեակ չարութիւնէս, բոլոր ախորժակով խմեց: Այս դէպքը խղճիս վրայ ծանրացաւ ու հիմա կը հասկնամ Տէրոջը սա տխուր յայտարարութիւնը թէ, «Եթէ աշխարհէ ըլլայիք, աշխարհ իրենները կը սիրէր, բայց որովհետեւ աշխարհէ չէք... անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ» Յովհ. ԺԵ. 19:

Ամուսինս յաջող գործի մը տիրացաւ, ես ալ

երեք գաւակներու մայր եղայ: Այսպէս թէեւ ընտանեկան բարեկալ ու զոհացուցիչ վիճակի մը հատանք, բայց ներքնապէս խաղաղութենէ զուրկ էի ես, միշտ խղճահար եւ անհանգիստ: Խորհելով թէ բարեգործութիւնը լաւագոյն միջոցն է ներքին խաղաղութիւն ձեռք բերելու համար, սկըսայ իմ բոլոր կարելիս ընել: Բայց անձնարդարութենէ բղխած խաղաղութիւնն ու կեղծ զոհանակութիւնը շուտով կորսնցուցի: Աշխարհի տըւած խաղաղութիւնը այդքան կը տեւէ Յովհ. ԺԴ. 27: Տէրը զիս խիստ ծանր հիւանդութիւնով մը մահիճ ձգեց: Բժշկական երկարատեւ խնամքներէ վերջ, գործողութեան մը անհրաժեշտութիւնը տեսնուեցաւ: Հիւանդանոց փոխադրուեցայ: Գործողութեան խնդրոյն շարժ զիս քննող փրօֆէսորներուն միջեւ անհամաձայնութիւն յառաջ գալով բոլորովին անյոյս վիճակի մէջ ձգեցին զիս: Ազգականներս ամէն այցելութեան «Կապոտ» թերթը կը բերէին ինծի: Բայց այդ թերթեալարոյ թերթը շատ հեռու էր ինծի պէս այնոյս եւ խղճահար մահամերձ մը մխիթարելէ: Քովա Սուրբ Գիրք մըն ալ ունէի: Մ'էջս փափաք մը արթնցաւ զայն կարդալու: Երբ բացի, աչքերս յանկարծ սա համարին գամուեցան, «Եթէ արդարեւ զրօնաբաւ կը փրկուի, հապա ամբարիշտը ու մեղաւորը ո՞ր պիտի գտնուին» Ա. Պետ. Դ. 18. Ո՛հ աննկարագրելի եղաւ այս համարին ազդեցութիւնը իմ վրաս: Ահաւոր սոսկումով մը ամբողջ հիւանդկախ էութիւնս սկսաւ դողալ: Փորձեցի քնանալ, փորձեցի մոռնալ այդ համարը, բայց ի զուր: Ներքին անդիմադրելի մղուումով մը Զրդ անգամ բացի Ս. Գիրքս: Այս անգամ Ես. Ա. 19րդ համարը հանդիպեցաւ աչքերուս, «Եթէ զուք յօժարիք ու հնազանդիք, երկրին բարիքը պիտի ուտէք»: Շատ բան չհասկցայ այս համարէն: Այդ խորհրդածութեանց պահուն յանկարծ բոլորովին ուժասպառ թմրութեան մէջ ինկայ: Զեմ գիտեր քունի մէջ էի թէ տեսիլքի, լուսազգեստ մէկը մօտեցաւ ինծի եւ ըսաւ, «Մի վախնար, գաւակս, պիտի չմեռնի», բայց նայէ որ երբ հիւանդանոցէն ելլես, յօժարելով ինծի հնազանդիս եւ ուղիղ կեանքը ապրիս»:

Յաջորդ օրը գործողութեան տարին զիս: Իրապէս ալ Տէրը զիս «մահուան շուքի ձորէն» ապահովութեամբ անցուց: Մի քանի ամիս վերջ տուն վերադարձայ: «Տէրը զիս շատ խրատեց բայց մահուան չմատնեց»:

1931ին Լա Սիթի մեկնեցայ: Հոգեւորապէս դեռ ունէ փոփոխութիւն կրած չէի, որովհետեւ երբեք հոգեւոր լոյս կամ հասկացողութիւն չու-

նէի: 1932ին երբ բաւականաչափ ապաքինած էի, քանի մը անգամ բողոքականաց քարոզածողովին ներկայ գտնուեցայ: Ասոր վրայ օր մը տեղոյս քարոզիչը քրոջ մը առաջնորդութեամբ ինծի այցելեց: Սուրբ Գիրքէն հատուած մը կարդացուեցաւ, ապա քանի մը պարզ յորդորներէ եւ աղօթքէ վերջ քարոզիչը մեկնեցաւ: Ես ինքնիրենս սկսաւ խորհիլ, «Որքա՛ն գեղեցիկ են լըսած խօսքերս, բայց չըլլայ որ այս երիտասարդն ալ մօրս ըսածին պէս վերջին օրերու սուտ մարգարէներէն մէկը ըլլայ»: Դեռ միտքս եսիրտս թանձր խաւարով ծածկուած էին ու «Քրքիստոսի փառաւոր Աւետարանին լոյսը» հոն չէր թափանցեր: Բ. Կոր. Դ. 4:

Օր մը հոգեւոր այցելուէ մը իմացայ որ հինգ կիրակի յաջորդաբար «Յիսուս կուգայ» նիւթին շուրջ պիտի քարոզուի: Փափաքեցայ անպայման այդ «նորեկուկ վարդապետութեան» վրայով լսել: Ամուսինս ալ համոզեցի որ ինծի ընկերանայ: Կը յիշեմ 15 Դեկտ. 1932 կիրակի կէսօրէ վերջ դարձեալ քարոզածողովին ներկայ եղայ: Պատգամը շատ ազդու էր: Բայց ամենէն աւելի սա երկու խօսքերը ուշադրութիւնս գրաւեցին, (1) «Ահա փութի պէս վառած օրը կուգայ»: (2) «Մէկը երկինք կ'ելլէ իսկ միւսն դժոխք կ'իջնէ, ես յայնժամ ո՛ւր»: Այդ օր կարծես թէ քարոզիչը դիտմամբ քարոզը կիսատ ձգեց եւ ծանուց թէ ամէն մարդ ազատ է մեկնելու կամ մնալու, վասնդի մնացեալ ժամանակը քացառիկ աղօթածողովի մը պիտի յատկացուի: Քիչեր մեկնեցան, ոմանք ալ դարձեալ ներս մտան: Ես երբեք տեղէն չշարժեցայ: Բայց Տէրը գիտէր որ այս կամ այն կերպով աղօթածողովը խանգարելու մտադրութեամբ հոն մնացի: Ո՛հ, ի՛նչ գէշ եւ ողբալի էր այդ հոգեկան վիճակս: Աղօթածողովը սկսաւ: Մէկ երկու երգէ վերջ Բ. Կոր. 2. 4-2 համարները կարդացուեցան, «Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը»: Եւ երբ այդ համարներուն վրայ շատ պարզ բացատրութիւն կը տրուէր, յանկարծ ներսիդիս իսով պատերազմ մը սկսաւ: Ժամանակը աղօթքի տրուեցաւ: Հագիւ մէկ երկու հոգի աղօթած էին, ես արդէն լըման զինաթափ եղայ: Քանի մը անգամ փորձեցի ելլել, չկրցի: Ինծի այնպէս կուգար թէ մէկը զիս բռնութեամբ վար կը քաշէ: Բայց «գոհութիւն Աստուծոյ որ ինծի յաղթութիւն տուաւ իմ Տէրոջ» Յիսուս Քրիստոսի ձեռքով: Ու ես ոտքի կայնած բոլորին առջեւ, զիջման դառն արցունքով իմ Փրկչիս դիրկը նետուեցայ: Ո՛հ, ի՛նչ օրհնեալ վայրկեան էր այդ, երբ ես «նորէն ծըն-

ւողի» մը երկնային փորձառութեանը արժանացայ: Մէկ կողմէն բոլոր մեղքերուս ներման վատահալութիւնը, միւս կողմէն Աստուծոյ խաղաղութեան յորդումը զիս «անպատմելի եւ փառաւորեալ խնդութիւնով լեցուցին»: «Փա՛ռք Յիսուսի, փա՛ռք, փա՛ռք անհուն...»: Նոյն օրը ուրիշ քանի մը հոգիներ ալ յանձնուեցան: Ալէլուիա՛:

Տուն վերադարձիս ամուսինս եղելութենէն բոլորովին անտեղեակ, զիս խենթեցած եւ դիմով կոչեց: Ըսի իրեն քաղցրութեամբ թէ խենթեցած չէի, հապա Աստուծոյ ձրի փրկութեան ուրախութիւնովը գինովցած եմ: Ամուսինս սաստիկ բարկացաւ: Այդ գրգռութիւնով ալ քանի մը ամիս ինծի դէմ խիստ լարուած մնաց, միշտ փորձելով հեռացնել զիս այդ ճամբայէն ծանր սպառնալիքներով եւ ուրիշ այլազան դժուարութիւններով: Վերջապէս օր մը որոշ կերպով ըսի իրեն, «Ինծի համար առանց ամուսինի կարելի է ապրիլ, բայց առանց Յիսուսի երբեք: Կը նախընտրեմ մեռնիլ, քան Փրկչէս բաժնուիլ»: Այս վճռական դիրքս զայն լուրջ խորհրդածութեան մատնեց: Փա՛ռք Տէրոջս, շատ չանցած անոր դիրքը եւ կեանքը բոլորովին փոխուեցաւ: Հիմա ոչ միայն սեւէ կերպով արգելք չի հանդիսանար, այլ ընդհակառակը շատ ուրախութեամբ եւ շարունակաբար ինք ալ ինծի եւ զաւակներուս հետ ամէն ժողովի կը յաճախէ: Կատկած չունիմ որ ան ալ շուտով Աստուծոյ ողորմութիւնովը իր Փրկչին պիտի յանձնուի: Փա՛ռք Սբ. Հոգիին ինծի ներշնչած այս փառաւոր վատահալութեան համար, թէ այս ուղղութեամբ եղած աղօթքներս ալ պիտի պատասխանուին: «Ինծի համար գործող Աստուծոյն կ'աղաղակեմ» Սաղ. ԾԷ. 2:

Ու հիմա վրտան եմ թէ, «Ան որ իմ մէջ» բարի գործ մը սկսեց, մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ ալ» վասնդի «առանց Աստուծան մը չեմ կրնար ընել», բայց «ամէն բանի կարող եմ Անով որ զիս կը զօրացնէ»:

«Արդ, Անոր որ կարող է առատութեամբ ընել ամէն բաներէն աւելի, զոր մենք կը խնդրենք կամ կը խորհինք, այն զօրութիւնովը որ մեր մէջ կը ներգործուի, Իրեն փա՛ռք եկեղեցիին մէջ Քրքիստոս Յիսուսով բոլոր դարերուն մէջ յաւիտեանս յաւիտենից», Եփես. Գ. 20-21:

Ձեր հաւատակից եւ զինուորակից քոյրը
ՍԻՄՁԱՐ ՀԱՁԱՐԵԱՆ

Լա Սիօթա

ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՍՈՒՐԻ ՄԱՅՐ ՄԸ

Յաճախ ըստած է թէ եկեղեցւոյ պատմութեան մէջ հսկայ դեր կատարող սուրբեր իրենց հոգեւոր կեանքի հարստութիւնը կը պարտին զլիակաւ արար իրենց մայրերուն: Այսպէս եղած է նաեւ պարագան Տօրթի թրիւտէլի համար եւ խիստ շատ շահեկան է կարգաւ այդ սուրբ մօր կեանքէն զրուագներ:

Նա 24 տարեկան բարեպաշտ աղջիկ մըն էր երբ ամուսնութեան ուզուեցաւ չար մարդու մը կողմէ գոր նա արգէն յաճախ մերժած էր: Բայց նէ գեղեցկագէտ եւ անձնուէր աղջիկ մը ըլլալուն՝ մարդը յամուսնեցաւ իր պահանջին մէջ եւ աղջիկը վերջապէս տեղի տուաւ մանաւանդ մարդուն հօրը եւ քրոջը սիրոյն, որոնք բարեպաշտ էին եւ իրեն շատ սիրելի:

Օր. թրիւտէլ ինքը կը պատմէ իր մօրը պատմութիւնը: «Շատ տխուր բան է» կ'ըսէ նա «վեր-յիշել իմ մայրիկիս չարչարանքները, բայց պէտք է ըսեմ Աստուծոյ փառքին համար թէ իմ զայն ճանչցած 27 տարիներու ընթացքին երբեք իր բերնէն զանգատ մը չլսեցի: Մենք չէինք կրնար հասկնալ թէ ինչպէս կրնար նէ միշտ խաղաղ մնալ եւ այնքան զժուարթութեանց մէջ ուրախ եւ արի սիրտ մը կրել. մանաւանդ որ ես զժբաղ-դաբար հօրս սրտնեղ, դաժանաբարոյ եւ բարկացող բնավորութիւնը ժառանգած էի՝ չէի հասկընար այն համբերութիւնը որով մայրս կը կրէր իրեն եղած բոլոր անարդար ու անիրաւ վերաբերմունքը: Երբ կը տեսնէի մայրիկիս քաղցրութիւնը հօրս հանգէպ, եւ երբ նէ կը ջանար մեզի անոր մէջ լաւ կողմեր ցուցնել (մինչդեռ մենք չարութենէ ուրիշ ոչինչ կը տեսնէինք), ես կը զոչէի. «Ո՛հ, մայրիկ, ինչպէ՞ս կրնաս անանկ խօսիլ, եթէ ես հօրս նման ամուսին մը ունենայի, անոր հետ քու վարուածէդ շատ տարբեր կը վարուէի. գուն զայն երես կը հանես, եւ փոխանակ անոր յանցանքները իրեն ցուցնելու, աղօթելէ ուրիշ ոչինչ կ'ընես»:

«Ձաւակս, կը պատասխանէր նէ, օր մը զուն գիւս կը հասկնաս: Իմ ամուսինս իմ բարեբարս է, ան է որ ինծի սորվեցուց Տէրոջմէ ուրիշ ոչ ոքէ օգնութիւն սպասել եւ իմ զաւակներովս միասին ինքզինքս միայն իր պաշտպանութեանը

տակ դնել: Եթէ դուք չէք ուզեր ընդունիլ թէ Փրկիչը մեզ կ'օրհնէ մեր կամքը փշրելով, դուք ինծի ձեր հօր հիմակուան պատճառածէն աւելի մեծ ցաւ մը կը պատրաստէք: Իմ պարտքս է աղօթել որ Աստուծոյ իմ վրաս գործածած դաւա-գանքը յաւիտեանական կրակը չնետուի. զայով իմ փորձութեանս՝ ես ասոր համար ամբողջ կեանքիս մէջ Տէրը պիտի գովեմ»: Ինչպէ՞ս Տէրը գովել այսպիսի փորձութեան մը համար կ'ըսէի ես: Իմ սիրտս չէր յօժարեր նման բան մը ընդունիլ, բայց մայրիկիս օրինակը վերջապէս յաղթեց:

14 զաւակ էինք տունին մէջ եւ մեր եկամուտը շատ քիչ ըլլալուն վերջին ծայր աղքատութեան մէջ մեծցանք: Այս կէտին մէջ մեր մայրը աւելի լաւ կը հասկնայինք եւ հակառակ շատ մը զրկումներու մեր մանկութիւնը քաղցր եւ ուրախ անցաւ: Հակառակ հօրս յարուցած կատաղի կոխներուն, խաղաղութիւնը կը տիրէր մեր անշուք յարկին տակ, անշուշտ շնորհիւ մօրս անգաղղում աղօթքներուն իր ամուսնոյն եւ զաւակացը համար: Մեր սնունդը շատ պարզ եւ միօրինակ էր, բայց լաւ սնուցուած մանկանց չափ առողջ էինք, եւ երբ մայրիկիս կը պատմէինք ուրիշ տղոց կերած համադամ կերակուրները, նա մեզի կ'ըսէր, Աստուծոյ փառք տուէք որ մեզի անհրաժեշտ եղածը ունինք, մինչդեռ շատ ուրիշներ անկէ ալ զրկուած են: Յաճախ տունին մէջ բնաւ ուտելիք չէր ըլլար, բայց մայրիկէս եւ երկինքի Թուրքները կերակրողէն զատ ոչ ոք գիտէր, եւ Նա մեզ երբեք երեսէ չձգեց: Այս տեսակ կեանքով մը մենք աղօթքի ամենէն քաղցր պատասխաններ կ'ունենայինք: Մայրիկիս նշանաբանն էր, «Աղօթել եւ բնաւ չմուրալ»: «Ձաւակներս» կ'ըսէր մեզի, «Տէրոջը յուսացողը բնաւ պիտի չամչնայ»:

Կարգալու համար Աստուածաշունչէն ուրիշ գիրք չունէինք, եւ անոր պատմութիւնները մեզի արքան սիրելի դարձան որ թէեւ գոցի պէս գիտէինք, բայց կը սիրէինք զանոնք կրկին եւ կրկին կարդալ: Դպրոց շատ քիչ ատեն կ'ընէր երթալ, զի շատ կանուխ հասակէն ամէն մէկս ստիպուեցանք աշխատիլ եւ այսպէսով Ս. Գիրքը մեր ամենալաւ դասագիրքը եղաւ: Մայրիկս ալ ամենէն շատ կը սիրէր զայն կարգալ, բայց միայն կիրակի օրեր ժամանակ ունէր: Ամէնքս ալ չարաչար կ'աշխատէինք. ինքս 9 տարեքէս սկսայ աշխատիլ առտուընէ մինչեւ իրիկուն առանց արձակուրդի ժամերու: Մօրս խրատները եւ — մինչ կ'աշխատէր — րարձրաձայն աղօթք-

ները մեզ գանգատելէ կ'արգիլէին եւ խաղաղութեան ու սրբութեան միջոցորտի մը մէջ կը պահէին: Նա չէր թուլատրեր ոչ մէկ չարախօսութիւն եւ ոչ մէկ կանաչի շատախօսութիւն. ինքը երբեք զիւղին լուրերը չէր կրկնէր: Քիչ կը խօսէր բայց իր կեանքը մեր մէջ կը ներգործէր եւ իր խօսքին կ'ընկերանար Աստուծոյ զօրութիւնը լսողներուն սրտերուն մէջ: Անգաղար մեզ Աստուծոյ ձեռաց մէջ կը յանձնէր, եւ ինձ կը թուէր տակաւին լսել երբ նա կը կրկնէր, «Կը խնդրեմ Քեզմէ որ անոնցմէ ոչ մէկը բացակայ չգտնուի վերջին օրը»:

Թէեւ ես ընտանիքին կրտսերն էի, բայց կը յիշեմ շատ ու շատ աղօթքներու պատասխանութիւնը: Ի մէջ աշուոյ մէկ հատը մասնաւորապէս իմ վրաս ազդած է: Հօրաքոյրս որ մեր հետը կը բնակէր, եւ մեզի մեծ նեցուկ էր, ծանրապէս հիւանդացաւ: Մօտալուտ մահուան մը ամէն նշանները կ'երևէին եւ նէ ասոր պատրաստուեցաւ ու վերջին հաղորդութիւնը առաւ: Քիչ յետոյ ամէն շարժում կորանցուց եւ միայն խօսելու կարողութիւն ունէր: Այժմ սկսաւ երկնային տեսիլքներ ունենալ եւ երբ երեկոյին ճրագը ներս բերին՝ նէ զոչեց, «Ի՞նչ տարօրինակ բան է ձեր ըրածը որ ճրագ կը բերէք, երբ սենեակը այնքան սքանչելի լուսով մը լեցուած է»: Մայրս հասկըցաւ թէ մահը մօտ էր, եւ գետինը ծունկի վրայ իյնալով, շերտեղանդ աղօթքով խնդրեց Աստուծոյ աշխարհային թանկագին քոյրը իրմէ չառնել, մինչեւ որ իր ամենէն տարէց աղջիկը անոր տեղը բռնեց չափ մեծնալով: Կէս զիշերին մօտ հօրաքոյրս երկար եւ անշարժ լուծեանէ մը յետոյ յանկարծ ըսաւ, «Կը տեսնեմ յատկօրէն թէ պէտք է դեռ այս արցունքի հովիտին մէջ մնամ քու հետդ ըլլալու»: Յիշաւի նէ դեռ 15 տարիներ ապրեցաւ մինչեւ որ իմ ամենէն մեծ քոյրս կրցաւ մօրս օգտակար դառնալ:

Սիրելի հօրաքոյրս ինքզինքը ամբողջովին մեզի նուիրած էր եւ գիշեր ցորեկ կ'աշխատէր որպէսզի մեզի բան մը պակաս չըլլար: Մեզ հազցնելու համար իր հազուատներուն զըրեթէ ամբողջը գործածած էր: Անոր խօսքը իմ մօր — մանաւանդ նեղ օրերուն — այս էր, «Բընաւ մի վախնար, քու գաւազներդ բնաւ երեսէ պիտի չձգեմ, կը նախընտրեմ ինքս անօթի մնալ քան թէ անոնց անհրաժեշտ եղածը պակաս ընեմ»: Իմ խեղճ մայրիկիս փորձութիւններուն մէջ Աստուած անոր թանկագին նեցուկներ տուած էր հօրաքոյրս եւ անոր ծեր հայրը: Եթէ մեզմէ մէ-

կը հիւանդանար, անոնք հիւանդը միասին Փրկչին ոտքը կը տանէին: Մայրիկս Լիլիէ ուրիշ բժիշկ չունէր և աղօթքէն զատ ուրիշ դեղ չունէր: Նոյնիսկ երբ ես ծաղկախտի բռնուեցայ եւ կոյր մնալու վտանգին տակ էի, ուրիշ մէկուն չիմացուցին: Մայրս լուր զրկեց զայն հօրս իմացնելու, բայց հայրս գիտեալունէն դուրս չելաւ եւ բնաւ հոգ չըրաւ: Նէ բնաւ սրտնեղութիւն չյայտնեց, բայց շերտեղանդ աղօթեց հօրս համար, ամենուն համար եւ մանաւանդ հիւանդ գաւազին համար: Թէ՛ տեսողութիւնս եւ թէ՛ ամբողջութիւնս ինձ վերագարձան: Ուրիշ տնգամ մը եղբայրներէս մին սաստիկ վախի մը հետեւանքով սկսաւ լուսնոտութեան քրիզներ ունենալ: Հայրս կրկին բացակայ էր: «Ես գիտեմ» ըսաւ մայրս, «այս հիւանդութիւնը մեզի զրկուած փորձութիւններուն ամենէն մեծն է, բայց չբնաստանի լուսնոտը Բր. Ժշկողը դեռ կ'ապրի: Մարդու բան մը մի ըսէք եւ աղօթենք»:

Երբ նէ այս նոր դժբաղդութիւնը հօրս պատէ մեց, անիկա չուզելով իր հաճութներէն խանգարուիլ, մայրս ծաղրեց եւ անոր վրայ խնդաց ըսելով թէ նէ կ'երազէր: «Շատ լաւ» պատասխանեց մայրս, «Աստուծոյ պիտի խնդրեմ որ Ժանը քու ներկայութեանդ երկրորդ քրիզ մը ունենայ բայց թէ անիկա վերջին քրիզը ըլլայ»: 8 օր յետոյ մանուկը իր հօրը ոտքերուն առջեւ դետին ինկաւ բերանը փրփրելով եւ տապալակելով: Բայց մայրիկիս կրկնակի աղօթքը կրկնակի ալ պատասխանուած էր: Այս քրիզը վերջինը եղաւ եւ եղբայրս այլեւս լուսնոտութեան ունէ նշան ցոյց չտուաւ մինչեւ 34 տարիներ յետոյ:

Բացառիկ սաստկութեամբ նեղ շրջանի մը, բարեկամ մը ջանաց համոզել մեծ քոյրս որ հօրըս դէմ զատ բանաճ մեր ինչքը փճացնելուն ու մեզ փողոցը մնալու վտանգին տակ դնելուն համար: Բայց մօրս հաւատքի կեանքին օրինակը սկսած էր իր պտուղները ցոյց տալ իր զատակաց մօտ, եւ այսպէս քոյրս քաջաբար պատասխանեց թէ մեր յոյսը ոչ գատաւորներուն վրայ է եւ ոչ ալ տրամաբանական արդարութեան վրայ, հապա Աստուծոյ խօսքին վրայ որ կ'ըսէ, «Ան որ կը հաւատայ, բնաւ պիտի չամչնայ»: Մայրս երբ այս դէպքը լսեց, մեզի ըսաւ, «Ձաւակներս, հաւատացէք իմ խօսքիս, բնաւ մարդոց մի դիմէք, հապա Աստուծոյ, անիծեալ ըլլայ այն մարդը որ մարդու կ'ապաւինի ու մարմինը իրեն բազուկ կ'ընէ» բայց «օրհնեալ ըլլայ այն մարդը որ Տէրոջը կ'ապաւինի ու անոր յոյսը Տէրն է» (Երեմ. Ժ. 5, 7): Դուք պիտի տես-

նէք թէ անոնք որ արտաքին պարագաներուն չեն նայիր, հապա հաստատ հաւատքով մը միայն Աստուծոյ կը նային, միշտ յարմար վայրկեանին օգնութիւն կը գտնեն»։ Մայրիկիս վստահութիւնը պարապ չեղաւ, քանզի քիչ ժամանակ յետոյ օգնութիւնը մեզի հասաւ Աստուծոյ կողմէ պատրաստուած ձեռքէ մը։

Գրեթէ նոյն շրջանին մենք ուրիշ փորձառութիւններ ունեցանք՝ որոնք մօրս հաւատքը փառաւորապէս պսակեցին։ Հայրս մեզ լքեց եւ օտար երկիր գնաց։ Մեկնելու պահուն մեր երկրորդ կովը ծախեց եւ դրամը հետը տարաւ։ Հաւուստ դրացի մը մեզի հարկ եղած դրամը փոխ տալ առաջարկեց որպէսզի ուրիշ մը ծախու առնենք, ու թէեւ մենք առուծախէ բան չէինք հասկընար, Աստուած մեզի օգնեց ամենէն ընտիր կով մը գնելու։ Մենք կրցանք ամէն օր 12-14 աման կաթ ծախելով ամբողջ պարտքը վճարել։ Ասկէ զատ ան արտը հերկելու եւ փոխադրութեան ալ կը ծառայէր այնպիսի տոկունութեամբ մը որ անդադար կ'զմայլէինք։ Երբ քանի մը տարիներ յետոյ հայրս վերադարձաւ եւ լսեց թէ այս ընտիր անասունին մասին զովեստով եւ ուրախութեամբ կը խօսէինք, զայն այնքան ատեց որ երդում ըրաւ թէ պիտի ծախէ եւ սկսաւ ամէն եկողին ոչինչ գնով մը մատուցանել։ Մենք շարունակական սրտադողի մէջ էինք ամէն անգամ որ մէկը ախոռին կը մօտենար։ Մայրս մեզ յանդիմանեց մեր այնքան վախին համար։ «Եթէ ձեր հայրը մինչեւ հիմա անտեսանելի քեռքով մը բռնուած չըլլար, հաւատացէք որ ձեզմէ եւ ոչ մէկը հիմա ողջ չէր ըլլար, անիկա մեզի Աստուծոյ թոյլ տուածէն աւելի չարութիւն չկրնար ընել։ Հաւատացէք նաեւ որ այս անասունը մեզի գտնել տալէն յետոյ, Աստուած կրնայ զայն մեզի պահել որքան ժամանակ որ անոր պէտքը ունենանք»։

Իրաւցնէ կովը մեզի մնաց որքան ատեն որ մայրս ողջ էր եւ մինչեւ ամէնքս ալ մեծցանք։ Անկէ յետոյ մարդ մը մեր կաթնավաճառին միջոցաւ անոր զովեստը լսած ըլլալով՝ եկաւ զայն մեզմէ շատ լեցուն գնով մը ծախու առաւ։

Տակաւին քանի՜ քանի՜ հաւատքի օրինակներ եւ աղօթքի պատասխաններ կրնայի պատմել եթէ հարկ չըլլար անոնց համար հայրս ամբաստանել, քանի որ գրեթէ ամենուն աոթիւ լուրջ ան էր։ Բայց քանի որ մենք մօրս մահէն յետոյ ուրախութիւնը ունեցանք տեսնելու հօրս ապաշխարելը եւ իր մեղքերուն վրայ արցունք թափելը, հոս միայն կ'ուզեմ շեշտել սա խօս-

քերուն ճշմարտութիւնը, «Մազ մը ձեր գլխէն պիտի չկորսուի առանց ձեր երկնաւոր Հօրը կամքին, եւ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ զԱստուած կը սիրեն»։

Երբ մենք ամէնքս ալ մեծցանք եւ ի վիճակի եղանք մեր ապրուստը ճարելու, այս անգամ կարգը մեզի եկաւ մեր մայրիկը առաջուան ճիշդ հակառակը եղող սիրով ու գուրգուրանքով շրջապատելու։ Մենք քաջութիւնը ունեցանք զայն մեր պաշտպանութեան տակ առնելու եւ հօրս ըսելու թէ այլեւս թոյլ չպիտի տայինք որ իր կեանքը իր ամուսնոյն եւ իր զաւակացը համար զոհող այս կինը — իրմէ զէջ վարմունք տեսնէր. թէ իր սրտեղովութիւնը եւ բարկութիւնը կրնար մեր վրայ տեղացնել, բայց մայրիկիս համար այլեւս հերիք էր։

Իր կեանքի վերջին տարին մայրս թէեւ կուրծքի ծանր հիւանդութեամբ մը չարչարուեցաւ, բայց իր զաւակացը սիրազեղ խնամքներովը շրջապատուեցաւ։ Այս միջոցին էր որ իր աղօթքներէն շատերը պատասխանուեցան եւ իր զաւակներէն շատերը ապաշխարեցին։ Իր մահուանէն 11 շաբաթներ առաջ Հոլանտայէն՝ մինչեւ այն ատեն մեզի անձանթ հարուստ հօրեղբայրս եկաւ։ Անիկա մեզ մասնաւոր սիրով մը սիրեց, և մօրս մահուան անկողինին մէջ անոր խոստացաւ մեզ իրեն որդեգրել, մեզի հայրութիւն ընել եւ հարստութիւնը մեզի կտակել։ Անիկա նոյնիսկ առանձնաշնորհում մը կը սեպէր որ Աստուած զինքը կը գործածէր իբր միջոց իր հաւատարիմ աղախինին հանդէպ իր հաւատարմութիւնը ցուցնելու։

Մայրիկիս մահուան օրը 11 զաւակներս ալ զայն շրջապատած էինք։ Նէ մեզմէ ամէն մէկուն գորովալի մնաս բարի մը ըսաւ, որմէ յետոյ լեզուն բռնուեցաւ եւ նշան ըրաւ որ զինք նստեցնենք։ Մեծ քոյրս զայն իր բազուկներովը զրկեց, քիչ յետոյ նէ իր վերջին քունը քնացաւ։ Մենք զայն իր Փրկչին բազկացը մէջ զրինք որդիական սիրոյ արցունքներով, եւ մեր ջերմեռանդ աղօթքը եղաւ մեր մայրիկին յիշատակը պատուել իր հաւատքին նմանող հաւատքով մը եւ իր կեանքին նմանող կեանքով մը։

Կը փափաքեմ իմ մայրիկիս հոգիովը բոլոր մայրերուն ըսել, «Եթէ կ'ուզէք ձեր զաւակներուն օրհնութիւն ըլլալ, անոնց համար հոգ մի ընէք զիզելու այն գանձերը որոնք ցեցը ու ժանգը կ'ապականեն, ոչ ալ անոնց ապահովելու մեծ օժիտ մը կամ գեղեցիկ հագուստներ (su beau trousseau)։ Սորվեցուցէք անոնց աղօթել եւ աշ-

խատիլ, բայց աշխատիլ հնազանդութեամբ եւ հաւատքով, եւ դուք անձամբ անոնց համար աղօթեցէք որպէսզի անոնք ըլլան կենդանի զոհեր որոնց ամէն մէկ անգամը պիտի ծառայէ զԱստուած փառաւորելու:

Թարգ: Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՆՈՅ. 3.—

ԱՍՏՈՒԱԾ ԱԶԳ ՄԸ ԿԸ ՊԱՏԺԷ

Դաս Դ. Թագ. ԻԴ. 1-ԻԵ. 21

Յովսիայի ձեռքով կատարուած բարեկարգութիւնը անոր մահուանէն յետոյ երկարատեւ հետեւանքներ չունեցաւ: Յուդա իր վերջին 4 չար թագաւորներուն օրինակին հետեւելով աւելի եւ աւելի գէշացաւ: Մարգարէներուն բողոքներուն (Երեմիա, Ամբակում, Սոփոնիա) հանդէպ ժողովուրդը ի սկզբան խուլ ապական զը ցուցնէր, բայց հետզհետէ այս անտարբերութիւնը յայտնի համարձակ հակառակութեան եւ ծաղրանքի դարձաւ: Մովսէսի օրերէն ի վեր հրեաները ընտանեցած էին սա իրողութեան հետ թէ իրենց ազգովին բարգաւաճումը իրենց հնազանդութենէն կախում ունէր (Բ. Օր. ԻԸ. 15 եւն. Երեմ. Է. 22):

Թէեւ Աստուած շատ երկայնամտութեամբ կըրկին եւ կրկին ուզեց իր ժողովուրդը իրենց չար ճամբաներէն դարձնել, ատեն մը եկաւ սակայն, երբ Աստուած ստիպուեցաւ դատաստան ընել, պատիժը անխուսափելի դարձաւ: Սիրոյ Աստուծոյն համար «օտար գործ» (Եսայ. ԻԸ. 21) էր այս, բայց Անոր արդարութեան համար անհրաժեշտ: Անոր սպանալիքները Անոր խոստումներուն չափ հաւատարիմ են: Իսրայէլ ծաղրեց այն մարգարէները որոնք անոնց մեղքը ցուցնելով զանոնք կ'զգուշացնէին թէ անխուսափելի էր պատիժը, վասնզի անոնք մեղքի մէջ յարատեւած եւ յամառած էին: Անոնք անարգեցին իրենց Աստուծոյն խօսքերը որոնք շնորհալի խոստումներ, սրտակեղեք պաղատանքներով հրաւէրներ եւ ահարկու ազդարարութիւններ էին. եւ վերջապէս անոնք իրենց անօրէնութեան չափը լեցուցին Աստուծոյ

մարգարէները չաւարելով ու սպաննելով (Բ. Մնաց. ԼԶ. 14-16: Երեմ. ԻԶ. 23: ԼԸ. 6: Գ. Առաք. Է. 52 եւն): Աստուած այլեւս մերժեց կրել այնպիսի ժողովուրդ մը որ իր երկայնամիտ շնորհակութիւնը անոնց դէմ ելաւ՝ մինչեւ որ «ալ բժշկութիւն չմնաց»: Պէտք էր որ անոնք պատժուէին: Պատիժը նկարագրուած է իր ահարկու պարզութեամբ Դ. Թագ. ԻԵ. 9-22ի մէջ: «Երուսաղէմը աւերակ ըրին, շրջակայ պարիսպները փլցուցին, Իսրայէլի փառքը եւ պարծանքը եղող Տէրը տաճարը ալքեցին, սրբարանին ծառայութեանը գործածուող ոսկիէ եւ արծաթէ սուրբ ամանները տարուելով կռատան մը մէջ զրուեցան» եւն:

Իրաւցնէ, «Արդարութիւնը ազգը կը բարձրացնէ, բայց մեղքը ժողովուրդներուն անարգանք է» (Առաք. ԺԷ. 34):

ՆՈՅ. 10.—

ԵԶԵԿԻԷԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԷ

Դաս Եզեկ. ԼԳ. 7-16

Կարգալ Եզեկ. ԺԸ. 1-32: ԼԳ. 1-20

Հաւատացեալներս թէեւ «անպիտան ծառաներ» բայց այսու պատասխանատու ենք մեզ շրջապատող մարդոց հոգիներուն եւ օր մը ծանր հաշիւ պիտի տանք Բրիտոսի ատեանին առջեւ յաւիտենական կրակի ու ծծումբէ վառած լիճին մէջ ձուլած իւրաքանչիւր հոգիի համար: «Այն ամբարիշտը իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի, բայց անոր արիւնը քու ձեռքէդ պիտի փնտռեմ» (Եզեկ. ԼԳ. 8): Ահարկու ազդարարութիւն: Կարծէ որ այս խօսքը մեր տուններուն պատերուն վրայ ու մանաւանդ մեր սրտին պատերուն վրայ գրենք: Այս խօսքին մէջ նախատահմանութեան եւ ազատ կամքով փրկութեան վարդապետութիւններն ալ կը միանան:

Տէր Յիսուս իր պատուական արիւնովը փրկուած իւրաքանչիւր հոգի, դեռ չփրկուած ուրիշ հոգիներու համար պատասխանատու, դէտ, պահպան կը դնէ (Յովհ. ԺԵ. 16):

Գէտին յատկութիւններն են ի մէջ այլոց.— (1) Արթուն, Մատթ. ԻԴ. 42-51: (2) Զգոյշ, Եզեկ. ԼԳ. 3: Եբր. ԺԳ. 17 (կը հսկեն): (3) Հաւատարիմ, Ամբ. Բ. 1, Գ. 17-19:

Գէտին գործերն են ի մէջ այլոց.— (1) Հսկի: Ասիկա առաջին եւ ամենակարեւոր գործն է. «Ու իմ բերնէն խօսք լսես» (Եզեկ. ԼԳ. 7: Եսայ. Ծ. 4-7, 10): (2) Խօսիլ, ազադակել, «Եբր. Ես (քեզի)

ըսեմ (ամբարիշտին համար)... ու դուն (ամբարիշտին) չխօսիս... անոր արիւնը քու ձեռքէդ պիտի փնտռեմ» (Եղեկ. ԼԳ. 8: Երեմ. Ի. 9: Եսա. ԾԸ. 1):

Դէտին դրդապատճառներն են ի մէջ այլոց.— (1) Աստուծոյ սէրը, Եղեկ. ԼԳ. 11: Հոով. Ե. 8, 9, Ա. Յովհ. Դ. 9: (2) Դէտին անձնական պատասխանատուութիւնը, «Անոր արիւնը քու ձեռքէդ պիտի փնտռեմ» (Եղեկ. ԼԳ. 8):

ՆՈՅ. 17.—

ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԳԵՐՈՒԹԵՆԷ ԿԸ ԴԱՐՁՆԷ

Դաս Եզրաս Ա. 1-6

Կարդալ Սաղ. ՃԻԶ. Երեմ. Իթ. 4-14: Դան. Թ.

Այս դասին հետ անբաժանօրէն պէտք է կարդալ նաեւ Դան. Թ. գլուխը: Աստուած Իւ ժողովուրդը գերութենէ դարձնելու համար զանազան անձերու հոգին արթնցուց, եւ մենք կրնանք ըսել թէ նախ Դանիէլի հոգին արթնցուց աղօթելու: Երեմ. Իթ. 12ի կատարումն է Դանիէլի աղօթքը: Գերութենէ վերադարձի այս հրաշալի զէպքը մանրանկարն է ու մարգարէութիւնը այն վերջին եւ փառաւոր վերադարձին որ հրեայ ազգը պիտի վայելէ Քրիստոսի երկրորդ գալստեան օրհնեալ զէպքով, երբ «անոնք Տէրոջը պիտի դառնան» եւ պիտի նային Անոր զոր խոցեցին» եւ «այսպէս բոլոր Իսրայէլ պիտի փրկուի»:

Այս դասին մէջ ամենէն աչքառու եւ փառաւոր կէտն է Աստուծոյ համար ըսուած սա խօսքը, «Եւ Պարսից Կիւրոս թագաւորին առաջին տարին Երեմիայի բերնով ըսուած Տէրոջը խօսքին կատարուելուն պէս» (Եզր. Ա. 1): Տէրը թէեւ Իր խօսքը կատարեց Իր ամենէն արդար խտուրթեամբը, բայց նաեւ այդ խօսքին կատարուելուն պէս: Եւ կրնանք առանց ամենազոյգն կատարածի ըսել թէ «այդ 70 տարիներու վախճանին յաջորդող 71րդ տարուան առաջին օրը Տէրը Կիւրոսի հոգին արթնցուց: Դանիէլի հոգին աւելի տաաջ արթնցուցած էր որպէսզի նա իր աղօթողի դերը կատարէր: Աստուած պարապ ու անիրաւ տեղը Իր զաւակները հարկ ելլածէն օր մը, ժամ մը, վայրկեան մը ու երկվայրկեան մը աւելի չթողուր փորձութեան ու նեղութեան մէջ:

Դանիէլի եւ Կիւրոսի հոգիներէն յետոյ՝ Տէրը արթնցուց գերութեան մէջ եղող ժողովուրդին հոգիները սկսելով անոնց իշխաններէն, քահանաներէն եւն:

Եւ վերջապէս Տէրը ժողովուրդին մնացորդին

հոգին ալ արթնցուց դրամ տալու այս փառաւոր վերադարձով Տէրոջը տանը շինութեան համար:

Մօտ է այն օրը երբ մեր Տէրը երկինքէն վար պիտի իջնէ Իր փառապանծ թագաւորութեան արդարութիւնը հաստատելու երկրի վրայ: Որո՞նք կ'ուզեն ըլլալ Դանիէլներ, որոնց հոգին Տէրը պիտի արթնցնէ աղօթելու եւ ըսելու, «Ամէն, եկուր Տէր Յիսուս», «Ով Տէր դարձուր մեր գերութիւնը հարաւի առունքերուն պէս» (Սաղ. ՃԻԶ. 4):

ՆՈՅ. 24.—

ԱՆԳԵԱՅ ԵՒ ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏԳԱՄԸ

Դաս Անգէ Ա. 2 8: Բ. 8, 9: Զաք. Դ. 6-10

Կարդալ Սաղ. ՃԻԲ.

Անգէ եւ Զաքարիա մարգարէներուն այսօրուան դասին (Տէրոջը տաճարին շինութիւնը) վերաբերեալ պատգամը աւելի լաւ հասկնալու համար հարկ է կարդալ նաեւ Եզրաս Դ. Դ. Ե. 2. գլուխները: Կիւրոսի հրամանով գերութենէ Երուսաղէմ վերադարձող հրեաները թէեւ ի սկզբան եռանդով փարեցան Տաճարին նորոգութեան գործին, բայց երբ թշնամիներէն հակառակութիւն եւ սպառնալիք տեսան, անոնց ձեռքերը Բուլցան եւ զործը կիսատ ու երեսի վրայ մնաց 16 տարիներ, որու ընթացքին անոնք իրենց ձեռունազարդ տուներ շինեցին, ցանեցին ու հնձեցին եւ սովորական ու մարմնաւոր կեանքը վերսկսան, բայց Տէրոջը տունը աւերակ մնաց: Մինչդեռ Տէրը զանոնք Երուսաղէմ բերած էր տաճարին շինութեան համար (Եզր. Ա. 2): Այս միջոցին Տէրը անոնց «ձեռքերուն բոլոր վաստակին վրայ երաշտութիւն կանչեց» (Անգ. Ա. 11, Բ. 16, 17: Զաք. Ը. 10-12): Սակայն անոնք չզգաստացան ու Տէրոջը չդարձան (Անգ. Բ. 17): Այն ատեն Տէրը նախ Անգէ մարգարէին ձեռքով ու երկու ամիս յետոյ երիտասարդ Զաքարիա մարգարէին ձեռքով (Զաք. Բ. 4) պատգամ ղրկելով Զօրաբարէլի եւ Յեսուի եւ ժողովուրդի բոլոր մնացորդին հոգին արթնցուց ու զացին իրենց Աստուծոյն Զօրաց Տէրոջը տանը մէջ աշխատեցան (Անգ. Ա. 14) եւ հակառակ նոր զժողովութեանց՝ յարատեւելով մօտ չորս տարուան մէջ տաճարին շինութիւնը աւարտեցին (Անգ. Բ. 18: Եզր. 2. 45):

Անգ. Ա. 14 համարին մարգարէական աչքով նայելով, կրնանք տեսնել Քրիստոսը որ իր մէջ կը միացնէ Զօրաբարէլի իշխանութիւնը եւ Յեսուի քահանայապետութիւնը՝ ինչպէս նաեւ Ենգէի ու Զաքարիայի սրտակեղեք կոչերը (Իւ

խոցուած կողով) եւ հրեայ ազգին մնացորդին հոգին արթնցնելով զանոնք իրենց Փրկչին պիտի դարձնէ: Արդէն այս երկու մարգարէութիւններուն մէջ ալ՝ մանաւանդ Ջաքարիայինին մէջ Քրիստոս պատկերացուած է շատ յստակօրէն: Անդ. Բ. 23, Ջաք. Ա. 11-17, բաղդ. Ջաք. Բ. 5 եւ Թ. 8 եւ Սաղմ. ԽՁ, 7-11, Եսայ. Դ. 5, Կ. 18, 19: Ղուկ. Բ. 32:

Ջաք. Բ. 8-13 Քրիստոսի Բ. գալուստը: Գ. 8, 9 Շառաւիղ, եօթը աչքով քարը բաղդ. Ջաք. Դ. 10 եւ Յայտ. Ա. 4, Ե. 6, նաեւ Ջաք. Դ. 14 եւ Յայտ. ԺԱ. 4:

Ջաք. Զ. 12, 13, Ջաք. Ը. Հաղարամեան, Ջաք. Թ. 7-8, մանաւանդ 9-11 աւելի մեծ Ծաղկազարդը: Ջաք. Ժ. 12: ԺԱ. 12, 13: ԺԲ. 8, 10: ԺԳ. 1, 6, 7, 9: ԺԴ. 3, 4, 5, 9 եւն:

Վ. Ս.

մէջն: Շատեր կը խորհէին թէ ամենաերջանիկն եմ ես, մինչդեռ ամենէն թշուառականն էի:

Հայ Աւետ. եկեղեցին հիմնեց Բարիդ Իսի լէ Մուլինոյի մէջ կիրականօրեայ դպրոց մը: Աստուած սրտիս մէջ փափաք մը արթնցուց ընկերուհիներու հետ հոն յաճախելու: Ձեմ կրնար մոռնալ այն օրը որ Տէրը Իր խօսքովը զիս անհանգիստ ընկելով ինձ յայտնեց թէ աշխարհ սրտին մէջ ուրախութիւն չի կրնար տալ այլ միայն Ինքն է որ մարդոց կրնայ պարգեւել յաւիտենական խաղաղութիւն մը:

Այդ ընկերայ հասկցայ թէ ես հոգ ու մոխիր եմ ու ոչ մէկ արժանաւորութիւն մը չունիմ շրթներս բանալու իմ սրտիս կարօտը յայտնելու: Տեսայ թէ ծնողքիս քրիստոնեայ ըլլալը զիս չի կրնար փրկել: Յայնժամ Փրկչիս խաչին տակ ծնրադրելով խոստովանեցայ բոլոր մեղքերս, ու

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆ

○○○○○ — ○○○○○

Ծնած եմ հաւատացեալ ընտանիքի մը մէջ: Ծնողքս իրենց զժբաղդութեան ու տառապանքի միջոցին ազօթելով համբերատար կ'ըլլային: Կը յիշեմ թէ Աստուած յաճախ կ'օրհնէր մեր տունը ինչպէս որբեւարին, որուն կարասէն ալիւրը ու կուժէն իւղը չպակսեցաւ: Անոնք ամէն տեղ կը վկայէին Աստուծոյ խօսքը քաջաբար, զիս միշտ կ'առաջնորդէին Աստուծոյ խօսքին: Հինգ վեց տարիքիս մէջ ինձ սորվեցուցած էին հոգեւոր երգեր ու ազօթքներ: Այդ մանկական տարիքիս դեռ մեծ բան մը չէի հասկնար, սակայն Աստուծոյ վախը կար սրտիս մէջ:

Մի քանի տարիներ անաջ երբ Բարիդ եկանք, գտայ շատ մը ընկերուհիներ, որոնք ինձ նման զԱստուած կը ճանչնային բայց Անոր զաւակները չէին: Անոնց միանալով սկսաւ աշխարհիկ կեանք մը վարել: Ծնողքս խաբելով ընկերուհիներու հետ կիրականները անօգուտ զուարճութիւններով կ'անցնէի: Կը վայելէի ուրախութիւն մը որ վաղանցուկ էր, տուն վերադարձին ինքզինքս տիրութեան ու խղճահարութեան մէջ կը գտնէի: Ջար նախանձը ու հպարտութիւնը կը տիրէր իմ

ՈՐՈՇՈՒՄՍ

Ձեր անձերը Աստուծոյ ընծայեցէք... եւ ձեր անգամները արգարութեան գործիքներ Աստուծոյ: Հռով. Զ. 13

Որոշեցի այս ոտքերով
Հետեւիլ Տէր Յիսուսի,
Եւ ծառայել այս ձեռքերով
Միայն, միայն Յիսուսի:
Որոշեցի ականջներով
Աշակերտել Յիսուսի,
Եւ միշտ պատմել այս շրթներով
Միայն Սէրը Յիսուսի:
Որոշեցի այս աչքերով
Վեր նայիլ, վեր Յիսուսի,
Եւ միշտ կապուած մընալ սրտով,
Միայն, Միայն Յիսուսի:
Որոշեցի ամբողջ հոգով
Գերի դառնալ Յիսուսի,
Եւ ծառայել ամէն բանով
Միայն ու միշտ Յիսուսի:

Կրկ.

Տէր, զաւկի նման
Որոշումներս լըման,
Իրազորեմու համար
Օգնէ ինձ անդադար:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիթա

փառք ըլլայ Անոր սուրբ անուան որ Իր փրկարար արեամբը լուաց ու ձիւնէն աւելի ճերմակ ըրաւ մեղսալից սիրտս: Այն օրէն ի վեր երբեմն թերացած եմ, սակայն օրհնեալ ըլլայ Տէրոջ անունը որ Իր զաւակներուն այցելութեամբը հաւասար զօրացնելով հիմնեց Իր վրայ: Լեզուս անկարող է բացատրել Աստուծոյ անհուն սէրը ինձ նման անարժանի մը համար: Ան Իր կեանքը զոհեց որպէսզի ես յաւիտենական կեանք ունենամ: Փառք Անոր սուրբ անուան:

Սիրելի ընթերցող, արդեօք ազաւինա՞ծ ես այս փրկարար խաչին. քու սիրտդ մաքրուա՞ծ է, կը հաւատա՞ս որ Յիսուս այնքան սիրեց քեզ մինչեւ իսկ Իր արիւնը թափեց քեզ համար:

ԼՈՒՍՎԱՐԴ ՔԷՕՍԷՆԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ



ՏԵՂԵԿԱԳԻՐ Ը.ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՅՐԱՆ-ՍԱՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՍԵՊՏ. 16 - 20 1935, ԼԻՕՆ.— Յրանսահայ Աւետ. Եկեղեցիներու ծրգ Միութեան ժողովը տեղի ունեցաւ Լիսնի մէջ Սեպտ. 16-20: Կը մասնակցէին, Մարտէյլէն՝ Հովիւ Վեր. Յ. Ն. Ղազարոսեան, Աւետարանիչ Վ. Սահակեան եւ Ս. Պազգալեան, Աւետարանիչ — Սբ. Գրածախ Կ. Պատաքեան: Վալմիսէն՝ Հովիւ Բրօֆ. Գ. Խաչիկեան, եղբ. Տիրատուրեան: Փոնտ Օւլէնասէն՝ Հովիւ Վեր. Ա. Փափագեան, եղբ. Մ. Սազալեան: Մոնթէլիմարէն՝ եղբ. Յակոբ Աշըգեան: Լիսնիէն՝ Հովիւ Վեր. Ժ. Պարսումեան, Աւետարանիչ Կ. Պարսումեան, Աւետարանիչ — Գրածախ Լ. Նիկողոսեան, եղբ. Ե. Յակոբեան: Սէնթ Էմիլիէնէն՝ Աւետարանիչ Ի. Աբրահամեան: Փարիզէն՝ Հովիւ Պատ. Զ. Պուտաքեան, Աւետարանիչ Մ. Վէքիլեան, եղբ. Ա. Միսիրեան: Ա. Շ. Օ. Ի կողմէ Տնօրէն Տր. Պէոսն, Սիւրիոյ աւագ միսիոնարուհի քոյր Շ. Պիւլ, զոր բարբաղդութիւնը ունեցանք մեր մէջ ունենալու, ինչպէս նաեւ Վեր. Պիւրնէ (1 օր) Ժընևի Սբ. Գրական Ընկերութեան տնօրէնը, որ եղբայրաբար կը գործակցի Աքսիոն Քրէթիէնի, եւ Հայ աւետ. եկեղեցիներու հետ, իր թանկագին աջակցութիւնը բերելով աւետարանչութեան եւ գրածախութեան գործին:

Համագումարիս սիրելի եւ յարգելի հիւրն էր մեր երէց եղբայրը Վեր. Ա. Զ. Եղոյեան, որուն

ներկայութիւնը մեծ օրհնութիւն եւ ուրախութիւն պատճառեց բոլորիս: Յրանսահայ Աւետ. համայնքներն ալ վայելեցին զինքը, քանի որ մեր Միութեան ժողովէն առաջ եւ վերջն ալ ան այցելեց զանազան եկեղեցիները, աւետարանչական ժողովներու առաջնորդելով, որոնք ամէն տեղ խիստ օրհնաբեր եղան, նոր նոր քաջալերանք եւ կեանք բերելով շատերուն: Բոլոր սրտով փառք կուտանք որ Տէրը մեզի թոյլ տուաւ մօտէն վաճել մեր սիրելի հիւրը:



I ԱՂԾԹԱԺՈՂՈՎՆԵՐ— Միութեան ընթացքին տեղի ունեցած աղօթաժողովները խիստ թանկագին էին: Զանազան առիթներով խօսեցան Վեր. Եղոյեան, Վեր. Պէոսն, Վեր. Ղազարոսեան, եւ Հ. Պիւլ: Տէրը շատ մօտ էր մեզի եւ ժողովականները առիթ ունեցան քանիցս ուշով քննելու իրենց սրտերն ու գործերը եւ կարողացան նորէն «Յիսուսի նայիլ», Ամէնօրհնեալ Փրկչին մէջ գտնելու իրենց կարիքներուն դարմանը, նոր ոյժ եւ յաղթութիւն: Անտարակոյս այս ժողովներուն արդիւնքը զգալի պիտի ըլլայ բոլոր ժողովականներուն ապագայ գործունէութեանց մէջ:

II ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ—Executive Comité հայ անդամները Վեր. Յ. Ն. Ղազարոսեան, Վեր. Ժ. Պարսումեան եւ Վեր. Ս. Փափագեան վերընտրուեցան: Ժողովը նկատի չառաւ այս եղբայրներուն հրաժարելու փափաքը եւստահութեան քուէով մը կրկին պատուեց զանոնք՝ խնդրելով անոնցմէ որ հաճին շարունակել ստանձնել եկեղեցիներու ղեկավարութիւնը:

Նոյնպէս վերընտրուեցաւ Միութեան ժողովի քարտուկարը:

Միութեան ժողովը որոշեալ Յանձնախումբի մը յանձնեց օրինագիծ-ծրագիր մը մշակելու հոգը, վերջնականապէս հարթելու զանազան եկեղեցիներու հովիւներուն եւ աշխարհական պատուիրակաց մասնակցութեանց հարցը: Այս ծրագիրը մի քանի փոփոխութիւններէ յետոյ ընդունուեցաւ այսպէս.—

Ա. Զանազան եկեղեցիներու պատկանող ո՛չ մէկ հոգեւոր գործաւոր պակաս մնալու է Միութեան ժողովներէն, եւ իւրաքանչիւր եկեղեցի հայթայթելու է իր զրկած ներկայացուցիչներուն ծախքերը:

Բ. Բոլոր Յրանսայի Հայ Աւետարանական եկեղեցիները կը բաժնուին չորս գլխաւոր շրջաններու՝

1) Փարիզ (Seine եւ Seine et Oise), 2) Լիօն (Rhône. Loire, Isère, Ain), 3) Վալանս-Օպէնաս (Drôme, Ardèche), 4) Մարսէյ (Bouches du Rhone, Var, Alpes, Maritimes).

Իւրաքանչիւր շրջան իր բոլոր հովիւները եւ Աւետարանիչները զրկելէ զատ կրնայ նաեւ զըրկել 3 պատուիրակ որոնք յարմարութեամբ կ'որոշուին նոյն շրջանին պատկանող եկեղեցիներուն եւ անոնց մասնաճիւղերուն միջեւ գոյացած հասկացողութեան մը հիման վրայ:

III ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ— Բոլոր եկեղեցիներն ալ իրենց տեղեկագիրները գրաւոր ներկայացուցին: Ընդհանուր առմամբ խիստ քաջալերական էին բերուած տեղեկութիւնները: Հակառակ տնտեսական տագնապին եւ հայերու կրած ամէն կերպ ճշռումներուն, հոգեւոր գործը կը յառաջդիմէր, կը տարածուէր եւ կը հաստատուէր ամէն տեղ: Իւրաքանչիւր տեղեկագրէ բղիւնալ ընթացիկ հարցեր մեծաւ մասամբ իրենց լուծումը գտան Միութեան ժողովի խորհրդակցութեանց ընթացքին, եւ որոշուելով ի գործ դրուեցան ի մասնաւորի հետեւեալները:

1) Լիօնի եւ շրջակայքի համար երիտասարդ ուժի մը կարիքը շատոնց զգալի ըլլալով, Մարսէյէն Լիօնի յատկացուեցաւ Պրն. Կալվին Պարսուսեան:

2) Լիօնի եւ Օպէնաս-Մոնթելիմարի եկեղեցիները փափաք յայտնած ըլլալով իրենց հովիւներուն ձեռնադրութեան, Միութեան ժողովը իւրացուց առաջարկները եւ հանդիսաւոր միջնորդութիւնը մէջ կատարուեցաւ ձեռնադրութիւնը:

3) Միութեան ժողովը ընթացք տալով՝ Վալանսի եկեղեցւոյն իր հովիւին համար խնդրուած արտոնութիւնը շնորհեց, որով Բրօֆ. Խայիկեանի իրաւունք տրուեցաւ կատարելու հաղորդութեան խորհուրդը եւ տալու առաքելական օրհնութիւնը:

4) Ժողովը ուրախութեամբ լսելէ յետոյ Իսիլէ Մուլինոյի մէջ կառուցուելի մատրան մասին բերուած տեղեկութիւնները, իր քաջալերանքը յայտնեց այս ձեռնարկին նուիրուած «Յորեկեանի Լոյսը» գիրքը մեծաքանակ սպառելու ծրագիր մը մշակելով, եւ Փարիզի եկեղեցւոյն խոստացաւ ապագային բոլոր կարելի աջակցութիւնը:

5) Գոհացնելու համար հետզհետէ լայնցող գործին պահանջները, Մարսէյի եկեղեցիին թուլադրեց քննել եւ ըստ պատշաճի որոշել Աւետարանիչ Ս. Պազգալեանի Լա Սիօթայէն Մարսէյ փոխադրութիւնը:

6) «Բանբեր»ի աշխատակցութիւն եւ բրօքա-

կանտի հարցերը ստացան որոշ եւ գործնական լուծումներ:

7) Յառաջիկայ Միութեան ժողովը տեղի պիտի ունենայ թէ կարելիութիւն ըլլայ Վալանսի մէջ, քապա թէ ոչ Մարսէյ:

IV Տեղի ունեցան լայն խորհրդակցական ժողովներ, որու ընթացքին Վեր. Եղոյեանի հետ կարծիքի եւ տպաւորութեանց փոխանակութիւններ կատարուեցան ի մասնաւորի նիւթ ունենալով թէ ի՞նչ ըլլալու են մեր դիրքն ու յարաբերութիւնը արտասահմանի ալ հոգեւոր շրջանակներու հետ:

Վեր. Եղոյեանի արտայայտած լուրջ եւ հասուն գաղափարներն ու տեսութիւններն մեծապէս օգտակար եղան Միութեանս, որ արդէն ինքզինքը մեծաւ մասամբ համաձայն գտաւ տրուած թելադրութիւններուն հետ: Մեր յարգելի հիւրը նաեւ քաջալերեց Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիներու որդեգրած եւ զաւանած ուղղութիւնները, թէ վարդապետական, թէ հոգեւոր գործունէութեան եւ կազմակերպութեան մասին, ու յորդորեց միշտ աւելի սերտօրէն կապուիլ Սատուոյ խօսքին, Տէրոջը եւ Անոր հարազատ զաւակներուն: Իր առաջնորդութեամբ Տէրունական ընթրիքը փակեց մեր Ը.րդ համագումարը Տէրոջը ամէնօրհնեալ ներկայութեանը գիտակցութեանը մէջ:

Բոլոր Միութեան ժողովի տեւողութեան ընթացքին տեղի ունեցաւ գիշերային աւետարանչական ժողովներ, մեծ մասամբ Վեր. Եղոյեանի առաջնորդութեամբ: Տէրը այցելեց Իր դաշտին, շատեր զօրացան և քաջալերուեցան: Այլք Տէրոջը եւ Անոր փրկարար շնորհքին դարձան: Լիօնի հիւրընկալ եկեղեցին յայտնապէս հոգեւոր հարստութիւն ստացաւ:

Տէրը Իր սիրովն ու գերիշխանութեամբ Իր փառքին համար պտղաբերէ մեր համագումարին բոլոր ջանքերն ու ծրագիրները:

Այդ աղօթքով

Քարտուղար Միութեան ժողովի
Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Փարիզ

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St. -, Savournin Marseille

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարանամիջի աղօթածողուններու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիտ (Վեր.) Յ. Ն. Ղազարսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, 13 R. Delille
15 30ին աղօթածողով, 11, Rue de l'Eclipse

8 30 ին կիր. դաս մեծերու. » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէնժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն ժէրոմ, Ս. Միքը, Ալբ, Պոլ

վար ժոռո մանաւոր բնակարաններու մէջ.

Շարանամիջի ժողովներ

Բ. շր. ժամը 2ին Սէնժ Սենթուան,

Դ. շր. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիվ

Դ. շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե. շր. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն Լուի.—Քարոզիչ Պատ. Վաֆրոն Սաֆակեան
Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնա.

16 ին քարոզածողով:

Սէնժ ՄԱՐԿԻՒԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԹԱ.—Քարոզիչ Պատ. Ս. Պագգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիտ Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիէր.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԵՆՍ.—Հովիտ Բրոֆ. Գ. Գ. Խայկեան
55 Ave. Jean Jaurés Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ՀԻՕՆ.—Հովիտ Պատ. Դ. Պարուսեան,

18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւնը:

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆՅԵ ԷՅԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Աբրահամեան
2. Place de la Pareille

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տիւ. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ.—Հովիտ Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournefort Paris 5°

Metro Moule Aut. K

Ամսոյն Գ. կիրակին ժամը 16. 30ին Ե.

Ք. Ը. երկսեռ միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux

ԱԼՖՕՐՎԻԼ.—Քարոզիչ Պր. Մ. Վէրիլեան
25 Rue Blanch, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

ՕՐԱՑՈՅՑ ԵՒ ՔԱՐԴԵՐ.—

«Բանբեր»ի ընթերցողներուն միտքը կը ձգենք կրկին թէ նոր տարուան առթիւ բարեկամի մը եւ կամ ընտանեկան յարկին ամե. նագեղեցիկ ընծան «Հայ ընտանիքին օրացոյցն» է: Անոր միջոցով ընտանիքիդ անդամաց օրական պատգամ մը կը հաղորդես: 1936ի օրարոյցը պատրաստ է մեր քով:

Նոր տարուան եւ շնորհեան առթիւ աւելի լաւ է եւ պատշաճ, որ Ս. Դրական համար մը կրող քարդով մը շնորհաւորես քու սիրելիներդ ու բարեկամներդ: Ասոր պատշաճի քարդեր միշտ կան սեր քով, ծաղիկներն երով, տեսարաններով եւ Ս. Գրական պապերնե. րով: Տիւգէնը վեց փրանք է:

ԱՂՕԹՔԻ ՕՐ «ԲԱՆԲԵՐ»Ի ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ.—

«Բանբեր»ի ընտանիքէն գրեթէ առաջին տարիէն ի վեր մեզի հետ սերտօրէն կապուած մէկը որ թէեւ մեզմէ հեռու կը գտնուի, մասնաւոր խնդրանք կ'ընէ, որ Բանբերի անդամները մասնաւոր օր մը յատկացնենք իրարու համար աղօթելու: Այս օրը կ'որոշենք Նոյեմբերի երրորդ կիրակին, խնդրելով որ այդ օրը մասնաւոր ժամ մը յատկացնենք աղօթելու իրարու համար, խմբագրութեան, յօդուածագիրներուն, ապագրական կազմին եւ բոլոր գործակալ. ներուն համար: Տէրը օրհնեալ օր մը ընէ սոյն օրը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՋԵՐՄ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ.—

ա. Ձեր անցեալ տարուան բաժնեգիրը ղրկա՞ծ էք, եթէ ո'չ, հաճեցէք ընդհիոյթ. գրկել, խմբագրութիւնը ատոր կ'սպասէ:

բ. Նոր տարին սկսելու մօտ է: «Բանբեր» մը նուիրել չե՞ս ու. զեր քու բարեկամիդ կամ ազգականիդ, խորհէ այս մասին:

գ. Նոր տարիէն առաջ չկա՞յ մէկը զոր կրնաս շահագրգռել «Բանբեր»ը կարդալու եւ չե՞ս ուզեր քանի մը նմոյշ տալ իրեն որ տեսնէ եւ բաժանորդագրուի:

«Բանբեր»ի համար ձեռքէդ եկած բոլոր ջանքերդ ըրա՞ծ ես: